




Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում  
«Իզգափայտ» ՍՊԸ-ին պատկանող արևային ֆոտովոլտային  
էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվություն

*Լրամշակում*



Ձեռնարկող՝ ՓԼԸՍԸԸ

*Տ. Բաղդասարյան*



Մշակող՝ «ՆՈՎԱԼ» ՍՊԸ



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Ընդհանուր տեղեկատվություն-----	Էջ 4
2. Հավելվածներ-----	Էջ 4
3. Օգտագործվող հապավումներ-----	Էջ 5
4. Պնակատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը-----	Էջ 5
5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացների վերաբերյալ -----	Էջ 10
6. Գործընթացի մասնակիցները -----	Էջ 10
7. Նախատեսվող գործունեության բնութագրերը-----	Էջ 13
7.1 Արտադրական հզորություններ-----	Էջ 16
7.2 Անվտանգություն-----	Էջ 19
7.3 Պաշտպանություն և լուսավորություն-----	Էջ 19
7.4 Ցանկապատում-----	Էջ 19
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, ներառյալ հարակից տարածքների նկարագիրը-----	Էջ 20
9. Շրջակա միջավայրի բնութագրերը-----	Էջ 23
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը-----	Էջ 23
9.2. Երկրաբանություն-----	Էջ 234
9.3. Կլիմա և օդային ավազան-----	Էջ 24
9.4. Հողային ռեսուրսներ -----	Էջ 28
9.5 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 29
9.6. Կենսաբազմազանություն-----	Էջ 30
9.7. Պատմության և մշակութային հուշարձաններ-----	Էջ 34
9.8. Հատուկ պահպանվող տարածքներ-----	Էջ 37
9.9. Բնության հուշարձաններ-----	Էջ 38
9.10. Աղմուկ և թրթռում-----	Էջ 39
10. Տարածքի սոցիալ-տնտեսական բնութագիրը-----	Էջ 39
11. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը-----	Էջ 41
12. Բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի նկարագրությունը-----	Էջ 43
13. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում-----	Էջ 43
14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը-----	Էջ 46
14.1 Օդային ավազան-----	Էջ 47
14.2 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 48
14.3 Հողային ռեսուրսներ-----	Էջ 50
14.4 Կենսաբազմազանություն-----	Էջ 50
14.5 Լանդշաֆտ-----	Էջ 51
14.6 Թափոններ-----	Էջ 51
14.7 Լուսավորություն և ջեռուցում-----	Էջ 52
14.8 Մարդու առողջություն և անվտանգություն-----	Էջ 53
14.9 Արտակարգ իրավիճակներ -----	Էջ 53
14.10 Աղմուկ և թրթռում-----	Էջ 53
14.11 Էլեկտրական և մագնիսական դաշտ-----	Էջ 54
14.12 Պատմամշակութային և բնության հուշարձաններ-----	Էջ 54
14.13 Սոցիալական-----	Էջ 54
14.14 Բարեկարգում-----	Էջ 55
14.15 Գումարային ազդեցություններ-----	Էջ 55

15. Շինարարության փուլի ժամանակացույցը-----	Էջ 57
16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը-----	Էջ 58
16.1.1 Օդային ավազան-----	Էջ 58
16.1.2 Հողային ռեսուրսներ-----	Էջ 58
16.3. Ջրային ռեսուրսներ-----	Էջ 59
16.1.4. Կենսաբազմազանություն-----	Էջ 59
16.1.5. Թափոններ-----	Էջ 60
16.1.6 Աղմուկ և թրթռում-----	Էջ 61
16.1.7 Արտակարգ իրավիճակներ-----	Էջ 61
16.1.8 Մարդու առողջություն և անվտանգություն-----	Էջ 61
16.1.9 Սոցիալական-----	Էջ 62
16.1.10 Բարեկարգում-----	Էջ 62
16.2 Շահագործման փուլ-----	Էջ 63
16.2.1 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 63
16.2.2 Հողային ռեսուրսներ-----	Էջ 63
16.2.3 Կենսաբազմազանություն-----	Էջ 63
16.2.4 Թափոններ-----	Էջ 63
16.2.5 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն-----	Էջ 64
16.2.6 Սոցիալական-----	Էջ 64
16.2.7 Արտակարգ իրավիճակներ-----	Էջ 64
16.2.8 Լանդշաֆտ-----	Էջ 65
17. Փակման փուլ-----	Էջ 65
18. Մոնիթորինգ-----	Էջ 66
19. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան-----	Էջ 67
20. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան-----	Էջ 89
21. Հետնախագծային վերլուծություն-----	Էջ 89
22. Հանրային ծանուցում և քննարկումներ-----	Էջ 89
23. Եզրահանգում-----	Էջ 89
Գրականություն-----	Էջ 91

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Ձեռնարկող	«Դիզաֆայտ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան Աբովյան 22 Ա, բն.45
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գայի փողոց 85 հողամաս
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	հեռ. +374 44 000010 hashvapah_SV@mail.ru
Պատվիրատու	Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ, իրավաբանական հասցեն Է՝ Ք. Երևան Աբովյան 22Ա, բն. 45:
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Արագածոտնի մարզի Թալին համայնք
Աշխատանքային նախագծի մշակող	«Դի Էներջի » ՍՊԸ
Գնահատման հաշվետվության կազմող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բոյունսուլի 6 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

## 2. Հավելվածներ

**Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայականը:

**Հավելված 2.** Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա:

**Հավելված 3.** Ճարտարապետահատակագծային առաջադրանք:

**Հավելված 4.** ՀԷՑ-ի կողմից տրված Էներգամատակարարման տեխնիկական պայմանը:

**Հավելված 5.** «ՇՄՓԱԿ» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեխնիկական առաջադրանքը:

**Հավելված 6.** Թալինի կոմունալ ծառայության ՀՈԱԿ-ի տեղեկանքը, աղբահանության պայմանագիրը:

**Հավելված 7.** Թալինի համայնքապետարանի նախնական համաձայնությունը:

**Հավելված 8.** Օդային ավազանի աղտոտման հաշվարկները:

**Հավելված 9.** Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ:

**Հավելված 10.** Պետ.Ռեգիստրի վկայականը:

**Հավելված 11.** Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրությունը:

**Հավելված 12.** Գլխավոր հատակագիծը և հողամասի իրադրության հատակագիծը:

**Հավելված 13** Դիտողությունների պատասխան ամփոփաթերթը:

### **3. Օգտագործվող հապավումները**

**ՇՄԱԳ՝** շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

**ՍՊԸ՝** սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերություն

**ՕԳ՝** օդային գիծ

**ՏԵ՝** տրանսֆորմատորային ենթակայան

**ԲՀՊՏ՝** բնության հատուկ պահպանվող տարածք

**ԲՍ՝** բաշխիչ սարք

**ԲԲՍ՝** բաց բաշխիչ սարք

**ԿՎտ՝** կիլովատտ

**ԿՎԱ՝** կիլովոլտ-ամպեր

**ԱՀԿՈՒ՝** Առավելագույն հզորության կետի ուրվակ

**ՄԲՖՎԿԽ՝** միաբյուրեղ ֆոտովոլտային վահանակների խումբ

### **4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը**

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)**-Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)**-Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար

ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

**«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)**-Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)**-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)**-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների

պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)-** Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

**ՀՀ «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՊԱՆԿՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ Օրենք(27. 11. 2006թ.)-** կարգավորում է կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

**«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.)** - Կարգավորում է ՀՀ Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

**«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ. )** - Սահմանում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**«Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)-** Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, Էներգակիրների արդյունավետ օգտագործման

ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում Էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող Էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող Էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

**ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները**

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրի թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
	Էվորոֆիկացիայի և գետնամերձ օդոսի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999



NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
	«Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոսկովա 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	2001	1998	2001	

### ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում՝** «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29 մայիսի 2002թ. N628 որոշում՝** «Հայաստանի հանրապետության Արագածոտնի մարզի պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում՝** «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

## 5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Արևային կայանի հետ կապված գործունեությունը ներառված է Գ կատեգորիայի մեջ, եթե կայանի զբաղեցրած տարածքը լինի 40 հա և ավելի:

«Դիզափայտ» ՍՊԸ արևային կայանը զբաղեցնում է 8 հա տարածք և համաձայն Օրենքի ենթակա չէ ՇՄԱԳ-ի և փորձաքննության: Միաժամանակ համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է բարձրավոլտ օդային գծերի(ՕԳ) կառուցումը՝ 110կՎ և ավելի հզորության: Օդային գծի կառուցումը ենթակա է փորձաքննության՝ «Բ» կատեգորիայի ընթացակարգով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արևային կայանը բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծին միանալու է մինչև **20մ երկարությամբ 110կՎ էլեկտրահաղորդման գծով**, ուստի սույն հայտը դասվում է «Բ» կատեգորիայի՝ համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետի:

## 6.Գործընթացի մասնակիցները

**Ձեռնարկող՝** «Դիզափայտ»ՍՊԸ ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան Արծվյան 22 Ա, բն.45: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020թ. ապրիլի 1-ի № 113Ա որոշման համաձայն՝ «Դիզափայտ»ՍՊԸ ընկերությանը տրամադրվել է 5ՄՎտ հզորությամբ ԼԷ №0681 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2042թ. ապրիլի 2-ը գործողության ժամկետով(Հավելված 2): Այն տեղակայվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում՝ «Դիզափայտ» ՍՊԸ ընկերությանը սեփականության(N 290320021-02-0008) իրավունքով պատկանող հողատարածքում (Հավելված 1):


**Կապալառու՝** «ՓԱՈՒԵՐ ԷՆԵՐՁԻ» ՍՊԸ:

Կայանը կառուցող ընկերությունը պատասխանատու է նաև բնապահպանական կառավարման համար, որը ներառում է՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների ապահովում,
- անհրաժեշտ թույլտվությունների և / կամ համաձայնությունների ձեռք բերում,
- մեղմացնող միջոցառումների իրականացում շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար,
- բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացման ապահովում,
- առողջության և անվտանգության պահանջների ապահովում:

Գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել նախատեսվող գործունեության նախագիծը, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) (Հավելված 3), վերջինիս համար հիմք հանդիսացող տարածքի սեփականության վկայականը, տեղանքի հատակագիծը, տեղազննման արդյունքները, տեղագրական հանույթը:

Նկար 1.



**Շրջակա միջավայրի նախարարություն**

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն որոշմամբ:

Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ՇՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

### ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն***

Նախարարության կարևորագույն գործառույթներից են նաև.

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, մրցունակության ապահովման, հասարակական առաջընթացի և երկրի անվտանգության բացառիկ կարևոր գործոն.

- մշակույթի զարգացմանը նպաստելը.

- մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը նպաստելը:

Նախարարությունը գործընթացին կարող է մասնակցել նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի առկայության կամ հայտնաբերման դեպքում:

### ***Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն***

Նախարարությունը մշակում և իրականացնում է նաև ՀՀ կառավարության քաղաքականությունը, Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

### ***Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)***

Սահմանում է արևային կայանի շինարարության և շահագործման պայմանները՝ ամրագրվում են Էներգիայի արտադրության լիցենզիայով: Ըստ ՀՀ օրենսդրության՝ ՀԾԿՀ Էներգիա

արտադրող կազմակերպությանը տրամադրում է Էներգիայի արտադրության լիցենզիա համաձայն ՀԾԿՀ 1.11.2013 թ. N374 որոշման:

### ***Առողջապահության նախարարություն***

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը՝ իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

***Արտակարգ իրավիճակների նախարարության*** կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 740-L որոշմամբ: Նախարարությունը գործառույթներն իրականացնում է իր ստորաբաժանումների միջոցով:


### **Թալին համայնք, շահագրգիռ հանրություն:**

Թալին համայնքը գտնվում է Արագածոտնի մարզում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի, ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Թալին համայնքում իրականացվելու են չորս փուլով հանրային քննարկումներ, որոնցից երեքն արդեն իրականացվել են ազդակիր համայնքում: Նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրությունը դրական է արտահայտվել:

## **7. Նախատեսվող գործունեության բնութագրերը**

Հայաստանն ունի արևային Էներգիայի մեծ ներուժ (1մ<sup>2</sup> հորիզոնական մակերևույթի վրա արևային Էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտժ/մ<sup>2</sup>, իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կվտժ/մ<sup>2</sup> ինտենսիվությամբ արևային Էներգիայի պաշարներով):

Հայաստանի Հանրապետության արևային ներուժը բավարար է արևային կայանների շինարարության համար: Ներկայացվում են ուղղակի նորմալ ճառագայթման և գլոբալ հորիզոնական ճառագայթման ներուժի քարտեզները:



Նախատեսվող արևային կայանի նպատակը ԷլեկտրաԷներգիայի արտադրությունն է: Արևային Էներգիան արևի լույսի վերածումն է ԷլեկտրաԷներգիայի՝ ուղղակիորեն օգտագործելով կամ ֆոտովոլտաիկա (PV), կամ անուղղակիորեն օգտագործելով կենտրոնացված արեգակնային Էներգիա (CSP): Սրանցից վերջիններն օգտագործում են ոսպնյակներ կամ հայելիներ ու հետևան համակարգեր՝ արևի լույսի մեծ չափաբաժինը փոքր ճառագայթում կենտրոնացնելու համար: Ֆոտովոլտաիկան լույսը վերածում է Էլեկտրական հոսանքի՝ օգտագործելով ֆոտոէֆեկտը:

«Դիզափայտ» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային Էլեկտրակայանի արտադրած Էներգիայի վաճառքը՝ երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն Էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային Էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, Էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

Նախագծի իրականացման նպատակներն են.

- ապահովել Հանրապետության Էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը,
- պահպանել և բարելավել այլընտրանքային ԷլեկտրաԷներգիայի արտադրությունը,
- ԷլեկտրաԷներգիայի արտադրությունում ներդնել նոր Էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:

Նախատեսվում է կառուցել 5 ՄՎտ պիկային դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղակայում՝ Թալին համայնքի վարչական տարածքում: Կայանը տեղակայված է լինելու «Դիզափայտ» ՍՊԸ-ին պատկանող Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գայի փողոց 85 հողամասում, զբաղեցնելու է 8 հա տարածք: Նախատեսվող արևային կայանը բարձրավոլտ Էլեկտրահաղորդման գծին միանալու է մինչև 20մ երկարությամբ 110կՎ Էլեկտրահաղորդման գծով, առանց հենասյունների՝ թռիչքային միացմամբ:

Համաձայն ընկերության սեփականության վկայականի նախատեսվող տարածքը կազմում է 15.2555հա: Մնացած 7.2555հա-ը մնալու է կառուցապատումից ազատ տարածք:

Ըստ անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ Էներգետիկայի: Արևային ֆոտովոլտային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները:

Արևային կայանը տեղակայված է լինելու ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Բուն գործունեության տարածքին բնորոշ է հիմնականում -20ից +30°C ջերմաստիճանը, քամին՝ 30մ/վրկ, սառցակեղևը՝ 15մ:

**7.1 Արտադրական հզորություններ.** Համաձայն արևային կայանի կառուցման տեխնիկական պայմանների՝ նախատեսվում է կառուցել 110կվ տրանսֆորմատորային ենթակայան: Արևային կայանը Հայաստանի էլեկտրական ցանցերին միացնելու համար նախատեսվում է կառուցել 1x6300կՎԱ հզորությամբ 110/0,8-0,8կվ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանի սնունմն իրականացվելու է «Ախուրյան-2» 110կվ օդային գծի թիվ 243 հենարանից ներանցումով, ճյուղավորման սխեմայով դեպի ԵԿ-ի 110կվ լարման մուտքային պորտալը՝ AC-70 հաղորդալարերով: «Դիզափայտ»ԵԿ-ի 110կվ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել TMH-6300 /100 մակնիշի ուժային տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի և 110կվ ՕԳ-ի շղթաներում տեղադրվելու են –BB-110 մակնիշի վակուումային անջատիչ, ТФ3М -110 մակնիշի հոսանքի տրանսֆորմատոր, -HKФ-110 մակնիշի լարման տրանսֆորմատոր, ОПН-110 արգելափակիչ գերլարումներից գծի և տրանսֆորմատորի կողմերում երկկողմանի հողանցման դանակներով Р/ИД-2-110 մակնիշի բաժանիչներ: ԲԲՍ դողային համակարգի շղթան հավաքվում է AC-150/24 հաղորդալարերով: 0,8կվ լարման կողմում տեղադրվելու են ցածր լարման լրակազմ բաշխիչ սարքավորումների(ԲՍ) 2500Ա նոմինալ հոսանքով 2 հատ մուտքային օդային ավտոմատ անջատիչներ: 110կվ սարքավորումները տեղադրվելու են հավաքովի մետաղական հենարանների վրա: Ենթակայանի սարքավորումներն արտաքին գերլարումից պաշպանելու համար 110 և 0,8կվ ներանցիչների վրա տեղադրվելու են պարպիչներ: Այնուհետև կատարվելու է ԵԿ հողանցում: ՖՎ վահանակների և կերպափոխիչների հողանցման նպատակով կայանի ամբողջ տարածքում կառուցվելու է 1 ընդհանուր հողանցման ցանց (վերջինն անկախ է 110/0.8/0.8 կՎ ենթակայանի հողանցման ցանցից):

ՖՎ3 սարքավորումների համար նախատեսվում է 25 հատ ներցանցային 18 ԱՀԿՈՒ-ով, 9/2 գծային մուտքով, 11700 հատ միաբյուրեղային վահանակ, 144 կեսբջիջ, 9 հաղորդածող՝ 520Վտ, 25 հատ փոփոխական հոսանքի համակցման տուևի, մետաղական արկղ՝ 600x400x250մմ(IP 67), որը համալրվում է 25 հատ եռաբևեռ-եռաֆազ ինքնավար անջատիչ՝ ջերմային և էլեկտրամագնիսական խզիչներով, 50 հատ մալուխային խցուկ (IP 68), 6395մ մալուխ՝ այլումինե բազմաջիղ ՊՎԶ մեկուսացումով (3x95քմմ), 50 հատ մալուխ՝ այլումինե բազմաջիղ ՊՎԶ մեկուսացումով(1x95քմմ), 350 հատ մալուխի այլումինե ծայրակալ՝ ճնշասեղմվող(95քմմ), 37112 մ անագապատված պղնձե ջիղերով հաստատուն հոսանքի մալուխ՝ 4քմմ, 450 զույգ հաստատուն հոսանքի մալուխի միակցիչ, 225 լրակազմ մետաղական հենակառուցվածքի հավաքակցում՝ վահանակների համար:

Արևային ֆոտովոլտային կայանը կազմված է լինելու 450 հատ ՄԲՖՎԿԽ-ներից, որոնք իրենց հերթին կազմված են 26 հատ միաբյուրեղային 520Վտ, 144 (72\*2) կեսբջիջներով, պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) երկերես վահանակներից: ՄԲՖՎԿԽ-ները 9\*2 խմբավորմամբ միացված են 200 կՎտ անվանական ելքային հզորությամբ եռաֆազ ներցանցային կերպափոխիչի 9 ԱՀԿՈՒ-ներին:

ՖՎ վահանակները տեղակայվելու են դեպի հարավ ուղղված և հորիզոնի նկատմամբ 30° անկյուն ունեցող հողային հենակառուցվածքի վրա՝ ձգման միջոցով: Հենակառուցվածքը ձգվում է նախօրոք՝ այդ նպատակով կառուցված երկաթբետոնե հիմքերի վրա(0,080մ<sup>3</sup>), տոփանվելու է 20-40մմ բազալտե խճով, այնուհետև լցվում է



հողային շերտը:

Նախատեսվող հենասյունների տեղադրման ժամանակ օգտագործվելու է 1 հատ հենասյան կանգնակ, պողպատե խողովակ, 2 հատ ամրան, 1 հատ լուսատուի բարձակ, 2 հատ պողպատե թիթեղ, АПВ-1x2.5մ2 այլումինե հաղորդալար:

Նախատեսված է ՖՎ վահանակների և կերպափոխիչների հողանցում: Այդ նպատակով կայանի ամբողջ տարածքում կառուցվելու է 1 ընդհանուր հողանցման ցանց (վերջինն անկախ է 110/0.8/0.8 կՎ ենթակայանի հողանցման ցանցից):

Հողանցման ցանցի կառուցման ժամանակ օգտագործվելու է 942,5մ երկարության 377 հատ պողպատե անկյունակ, 3600գմ շերտապողպատ՝ 40x4մմ: Նախատեսվում է մինչև 10կվ լարման մալուխների անցկացում՝ խրամուղով:


**Ենթակայան.** Կայանը 110/0.8/0.8 կՎ 6300 կՎԱ հզորությամբ ենթակայանի միջոցով միանալու է «Ախուրյան-2» 110կՎ ՕԳ-ին: Ենթակայանը կառուցվելու է 600մ<sup>2</sup> մակերեսի վրա՝ 0,5մ խորության փոսորակում: Ամրացվելու է 25սմ հաստության կոպճավազով և խճաշերտով: Տրանսֆորմատորի տակ կատարվելու է ռելսի և մետաղական կոնստրուկցիաների տեղադրում: Կատարվելու է 10սմ շերտով տրանսֆորմատորի յուղընդունիչի փոսի բետոնապատում՝ կողապատման միջոցով, այնուհետև յուղընդունիչը ծածկվելու է մետաղական շրջանաձև ցանցով: Տրանսֆորմատորային փոսի շուրջը պատվելու է ավազե սավաձքով՝ 85մ<sup>2</sup> մակերեսով:

Տեղադրվելու է նաև յուղընդունիչ՝ 8մմ հաստության, 2.5x2.5x1.5 չափսերի մետաղական(պողպատե թիթեղ) բաք և խողովակաշար՝ 70սմ տրամագծով կոյուղու չուգունե դիտանցքով: Տեղադրվելու է 18մ երկարությամբ 200մմ տրամագծով խողովակ:


Ենթակայանի տարածքը ցանկապատվելու է 134,4մ<sup>2</sup> մետաղական ցանցով՝ 2,6մ երկարության և 88,5մմ տրամագծով կանգնակներով:

Կայանի տարածքում շուրջօրյա վերահսկողության համար նախատեսվում է օպերատորական 5-6մ չափերի շինության կառուցում:

Նկար 3. Հատակագծային լուծումներ



Նկար 4. Հենասյուների հատակագիծ



**7.2 Անվտանգություն.** շահագործման փուլում կայանում կատարվելու է մոնիթորինգ ստորև նշված միջոցներով.

- ինվենտորների մեջ ներկառուցված հատուկ WiFi swich-եր,
- տեսահսկման համակարգ, տեղադրվելու է 48 հատ տեսախցիկ, գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- ենթակայանի տարածքում հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում կրակմարիչներ,
- արևային կայանում լինելու է պահակակետ, որտեղ տեղադրվելու են անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար հեռուստացույց, մոնիտոր՝ մոնիթորինգի արդյունքներին հետևելու համար:

Ենթակայանի շանթապաշտպանությունն ապահովվելու է պորտալների վրա տեղադրված շանթարգելներով:

**7.3 Պաշտպանություն և լուսավորություն.** արևային կայանի տարածքն ապահովված է լինելու լուսավորության և տեսահսկման սարքերով:

Տարածքի արտաքին լուսավորության համար օգտագործվելու է 1 լրակազմ կառավարման վահան, մետաղական արկղ, եռաբևեռ եռաֆազ ինքնավար անջատիչ՝ ջերմային և էլ-մագնիսական խզիչներով, 1350մ ալյումինե մալուխ՝ վինիլային թաղանթով և վինիլային մեկուսացումով՝ 4 մալուխ՝ ալյումինե բազմաջիղ ՊՎԸ մեկուսացումով(3x95քմմ) 10քմմ կտրվածքով, 38 լրակազմ հենասյուն:

Ենթակայանի համալիր լուսավորությունը, ջեռուցման համակարգը և արտաքին լուսավորությունը կատարվելու է ԼԵԴ լամպերով՝ լուսարձակներով:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարվելու են ПУЗ-ի, СНиП 3.05.06-85 և СН 102-76 նորմերի պահանջներին համապատասխան:


Գործունեության իրականացման 20 տարվա ընթացքում կայանն արտադրելու է մոտ 198.5 ԳՎտ.ժ էլեկտրաէներգիա:

Ընթացիկ և պլանային սպասարկման համար կայանի տարածքում նախատեսված են ներքին օգտագործման ճանապարհներ՝ գրունտային:

**7.4 Ցանկապատում.** Կայանի ամբողջ տարածքը ցանկապատվելու է:

Նախատեսվում է արևային կայանի ցանկապատում՝ 1167 գմ երկարությամբ, h=2000մմ բարձրությամբ, m=2045կգ քաշով մետաղացանցով՝ 350 հատ կանգնակներով: Ենթակայանի տարածքը ևս ցանկապատվելու է 134,4 մ<sup>2</sup> մետաղական ցանցով: Ցանկապատը լինելու է դռնակով՝ 28 պողպատե կանգնակների վրա:

Արևային ֆոտովոլտային կայանի տեսքը կառուցումից հետո




### **8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, ներառյալ հարակից տարածքների նկարագիրը**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում, Գայի փողոցին զուգահեռ հատվածում՝ դեպի Դդմասար համայնք: Թալին համայնքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան ցածրադիր լանջերին՝ Արտենի լեռան մոտ, ծովի մակարդակից 1585մ բարձրություն վրա: 5 ՄՎտ պիկային դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները:

Տարածքի տեղական աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40022'04.2'' և արևելյան երկայնության 43051'24.1'':


Իրադրության սխեմա



Տեղանքում գլոբալ հորիզոնական ճառագայթումը մոտ 1536 կՎտ-ժ/մ<sup>2</sup> է: Տարվա մեջ անարև օրերի քանակը 37 օր է: Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները համապատասխանաբար՝ +38<sup>0</sup>C և -26<sup>0</sup>C է: Օրվա մեջ առավելագույն տեղումները (ձյուն) 27 մմ է (փետրվար): Քամու գերակշռող ուղղությունը ամբողջ տարին հյուսիսային է: 25 տարվա մեջ 1 անգամ հնարավոր քամու առավելագույն արագությունը 26մ/վ է: Օդի հարաբերական բացարձակ խոնավությունը՝ 66%:

Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդները և ձորակներով կտրտված լանդշաֆտը՝ կազմված է մի շարք չորրորդական լավային հոսքերից: Դրանցից մեկը տարածված է նաև ներքին Թալինի մատույցներում, իսկ լավային հոսքերի վրա տարածված են տուֆային նստվածքները: Բնական լանդշաֆտները ներկայացված են չոր տափաստաններով և 3°÷5° մակերևութային թեքություններով:

ՀՀ լանդշաֆտային գոտիները



Գործունեության իրականացումը կատարվելու համաձայն՝ «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (Հավելված 4):

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ, բացակայում են շենք-շինությունները: Առկա է միայն 5-6մ չափերի պահակակետ: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը բացակայում են: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ 300-500մ երկարությամբ գրունտային ճանապարհով: Տարածքին մոտ 400մ հեռավորության վրա գտնվում է Մ1 հանրապետական նշանակության ճանապարհը:

Գործունեության վայրից՝ մոտ 600մ հեռավորության վրա գտնվում է այլ արևային կայան, տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Մաստարա գետն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 7 կմ հեռավորության

վրա:

Նախատեսվող գործունեության վայրին մոտ գտնվող մոտակա բնակավայրերն են Դաշտամեջը՝ 1,8կմ և Թալին համայնքը՝ 1,2 կմ:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Մշակութային հուշարձանների ցանկում գրանցված հնագիտական արժեքների չկան, առկա է հնագիտական շերտ՝ դաբարանադաշտ: Գործունեության տարածքից՝ մոտ 4կմ բարձրության վրա գտնվում է Արագածի ալպիական արգելավայրը, 500մ հեռավորության վրա՝ Թալին-Դաշտադեմ ճանապարհին կից գտնվում է պատմամշակութային հուշարձանը՝ Թալինի քարավանատունը:

Արևային կայանի համար հայցվող տարածքում հետազոտությունը ցույց է տվել, որ խոտածածկը գրեթե բացակայում է, տարածքը երկար տարիներ օգտագործվել է որպես արոտավայր և ամեն տարի գործնականում գերարածեցվել է: Գործունեության ենթակա տարածքում համաձայն իրականացված հորատումների՝ հողաբուսաշերտը բացակայում է, առկա են որոշ քարաթփային երևակումներ:

Տարածքին բնորոշ են մուգ շականակագույն, ավազախճային, տեղ-տեղ կարբոնացեմենտացված հողերը՝ մասնակի խոտածածկով: Հարակից տարածքներն ազատ արոտավայրեր են: Հողերի կազմին բնորոշ է ֆոսֆորով և կալիումով թույլ հագեցվածությունը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

## **9. Շրջակա միջավայրի բնութագրերը**

**9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը:** Համաձայն գոյություն ունեցող տեղեկատվական աղբյուրների՝ տարածաշրջանը վերևից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Լիցքեր՝ կազմված խճից, խճավազից և կավավազների խառնուրդից

Շերտ – 2 Տուֆեր՝ կարմիր-վարդագույն երանգի, տեղ-տեղ խճային հատիկային կազմությամբ:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող արևային կայանի կառուցման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն): Հիդրոերկրաբանական տեսակետից, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ուստի դրանց բնորոշ է բարձր ջրատարությունը: Տեղանքում ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ և դրանց լավատակ հնահուններում կուտակվելով: Ուսումնասիրությունների արդյունքում բնութագրվող տեղանքում գրունտային ջրերը մինչև 8.0մ խորություններում չեն հայտնաբերվել: Ըստ գրական աղբյուրների՝ գրունտային ջրերի ինֆիլտրացիան տեղի է ունենում ավելի խորը հորիզոններում, որոնց մակարդակները տատանվում են 120-150 մ խորություններում:

**9.2 Երկրաբանություն:** Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ Թալինի համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են  $A=0.2-0.3g$ :

Երկրաբանական կառուցվածքի և տեկտոնիկայի գոյություն ունեցող ուսումնասիրությունների համաձայն՝ բնութագրվող տեղանքի երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային է, սարահարթը ձևավորվել է Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեության հետևանքով լեռան օջախից դուրս եկող ժայթքումից: Հրաբխային համալիրները ներկայացված են անդեզիտա-բազալտներով, դացիտներով, տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են Էրոզիոն գոյացությունների շերտերով: Դրանք հիմնականում կենտրոնական տիպի չորրորդական առաջացումներ են: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաերոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմնահարությունը:

**9.3 Կլիման և օդային ավազանի իրավիճակը:** Արագածոտնի մարզի և հատկապես նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է  $20-24^{\circ}\text{C}$  միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է  $38^{\circ}\text{C}$ :  $10^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը կազմում է 180-200 օր: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է  $-4 -6^{\circ}\text{C}$  միջակայքում: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-240 օրերի միջակայքում: Տարեկան տեղումների քանակը կազմում է 300-400 մմ, որոշ դեպքերում՝ 400-550 մմ: Տարեկան գոլորշուհականությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:



Օդի ջերմաստիճանը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Թալին	1637	-5,2	-4,0	0,6	7,6	12,1	16,4	20,7	20,8	16,5	10,1	3,3	-2,9	8,0	-26	38

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների													Միջին	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %		ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Թալին	76	75	68	64	67	61	56	55	55	64	72	77	66	69	36	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> , մմ օդական առավելագույն													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյա կային բարձրությունը,	Տարվանց ձնածածկույթի զտեռն ասանտ	Չյան սեջ ջրի առավելագույն քանակը.
	Հուն-վար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հուն-վիս	Հուլ-իս	Օգոստոս	Սեպ-տեմբեր	Հոկ-տեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	14			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14			
Թալին	25	27	37	57	79	52	32	22	20	35	28	24	438	64	4	137
	18	25	38	32	37	63	41	52	67	36	50	19	67			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը,	Միջին տարեկան մթնոլորտային ձնշումը,	Ամիսներ	<u>Կրկնելիությունը, %</u> Միջին արագությունը, մ/վ								ըստ ուղղությունների	Անհող մու-թյունների կրկնելիությունը,	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրվ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրվ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						

նումր	(հՊա)										%				25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Թալին	834,9	հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1,5	1,9	49	26	29	31
			2,4	2,2	2,6	2,9	2,1	2,2	2,6	3,6							
		ապրիլ	22	8	13	27	15	4	4	7	33	2,2					
			3,3	2,4	2,6	3,6	2,9	3,5	3,2	4,1							
		հուլիս	31	8	9	25	12	3	3	9	36	2,2					
			3,5	2,6	2,4	3,2	2,4	2,7	2,7	4,1							
		հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7	42	1,8					
			2,9	2,2	2,4	3,0	2,2	2,8	2,7	3,9							

Աղյուսակ 5.

Անարի օրերի քանակը

Բնակավայրի, օրերնութարանական կայանի անվանումը	քառ առիսների													Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
Թալին	7	6	5	3	1	0,5	0,06	0,1	0,1	2	4	8	37	

Աղյուսակ 6.

Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օրերնութարանական կայանի անվանումը	Տևողությունն քառ առիսների, ժամ													Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
Թալին	102	130	166	178	228	293	338	326	286	216	137	102	2502	

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Թալին համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հաշվետվությունում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներն՝ ըստ բնակչության:

Հայելոմոնիթորինգ ձեռնարկ-ուղեցույցի համաձայն՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Թալին համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

**9.4 Հողային ռեսուրսներ:** ՀՀ Արագածոտնի մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնաճևացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Մարզի 19 համայնքներ ունեն լեռնային, իսկ 40 համայնքներ՝ բարձր լեռնայինի կարգավիճակ:

Թալինի տարածաշրջանի մի մասը գտնվում է նախալեռնային գոտում, իսկ մյուս մասը՝ լեռնային գոտում, ծովի մակերեւոյթից 2000-2500 մետր բարձրության վրա:

Տարածաշրջանի մակերևույթի մեծ մասը կազմված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներից: Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաշենի, Ապարանի սարավանդները, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները:

Տարածաշրջանի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը՝ 4313.0 հա է: Համայնքի արևելյան հատվածի հողածածկույթը խիստ աղքատիկ է: Այս տարածքները ներկայացված են խիստ կտրտված թեք լանջերով, հողերը՝ էրոզացված են:

Գործունեության ենթակա տարածում, համաձայն իրականացված հորատումների, հողաբուսաշերտը բացակայում է, առկա են որոշ քարաթփային երևակումներ:

**9.5 Ջրային ռեսուրսներ:** Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձևահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզում բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները: Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Սպիտակ ջրատարները: Արագածոտնի մարզում ստորգետնյա ջրերը գտնվում են 120-150մ խորության վրա:

Մարզի հիմնական զարկերակը Քասախ գետն է՝ երկարությունը 89 կմ, ավազանի մակերեսը՝ 1480 քառ. կմ, Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Մարզի տարածքով են հոսում նաև Հալավար, Գեղածոր (երկարությունը 34 կմ է, ջրհավաք ավազանը՝ 144 քառ. կմ), Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը:

Կան շատ հեղեղատարեր (նշանավոր է Մաստարայի հեղեղատարը): Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունչիի ջրամբարները: Ամենամեծը Ապարանի ջրամբարն է. մակերեսը 7.0 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ<sup>3</sup>, օգտակարը՝ 81 մլն.մ<sup>3</sup>, ջրթողունակությունը վայրկյանում՝ 18 մ<sup>3</sup>:

Մարզում առկա ոռոգման ջրի ծավալը տարեկան կազմում է մոտ 520 մլն.մ<sup>3</sup>:

Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85 մլն.մ<sup>3</sup>, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս է գալիս մարզի տարածքից:

**Թալինի ջրանցք:** Ջրանցքը գտնվում է Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Սնվում է Ախուրյան ջրամբարի ամբարտակված ջրերից:

Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957թ., երկրորդը՝ 1974թ., երրորդը՝ 1986թ.: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ: Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ջրթողունակությունը 30 մ<sup>3</sup>/վ է: Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազար հեկտար հողատարածք:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքեր չկան: Արևային կայանի շինարարական և հետագա շահագործման

փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածությունը փոփոխության չի ենթարկվելու:

**9.6 Կենսաբազմազանություն.** Հայաստանը գտնվում է Կովկասի Եկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 հիմնական լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ Եկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն:

**Բուսականություն:** Տարածաշրջանին բնորոշ է կիսաանապատային և տափաստանային բուսածածկույթը: Տարածքի բուսականությունը ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և տափաստանային մոլախոտային բուսականությամբ:

Տարածաշրջանում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Թալիսի տարածաշրջանում առկա են Կարմիր գրքյան հետևյալ տեսակները՝ Խլոպուղ Գրոյտերի *Merendera greuteri* Gabrielian, Կատեգորիա՝ CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, Տուղտավարդ Սոֆիայի *Alcea sophiae* Iljin ` EN B 1 ab(iii) + 2 ab(iii), վտանգված տեսակ:



*Խլոպուղ Գրոյտերի*



*Տուղտավարդ Սոֆիայի*

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, որի արդյունքում նախատեսվող գործունեության իրականացման և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է: Գործունեության տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված բուսատեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան:

**Կենդանական աշխարհ:** Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:

Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տարածաշրջանում կան մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Սողունների և երկկենցաղների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների և երկկենցաղների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել:

Աղյուսակ 7

Սողուններ և երկկենցաղներ		Գրականության տվյալներ՝ տարածաշրջանում	ՀՀ Կարմիր գիրք	Միջ. Կարմիր ցուցակ
Typhlops vermicularis	Կույր օձ	+	-	-
Eirenis collaris	Վզնոցավոր էյրենիս	+	-	-
Vipera lebetina	Գյուրզա	+	-	-
Laudakia caucasica	Կովկասյան ազամա	+	-	-
Bufo viridis	Կանաչ դդոշ	+	-	-

Տարածքում հանդիպող անողնաշարավորների տեսակային կազմը որոշվել է ըստ գրականության տվյալների (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Դաս	Կարգ	Ընտանիք	Տեսակ
Միջատներ Insecta	Կարծրաթևեր կամ բզեզներ Coleoptera	Չնայուն բզեզներ Carabidae	Bembidion lampros
			Harpalus affinis
			Ophonus azureus
			Acinopus laevigatus
			Dixus obscurus
			Ditomus calydonius
			Zabrus trinii
			Calathus ambiguus
			Platytarus umbratus
			Cymindis
			Lesthes sp. 1
			Lesthes sp. 2
			Lebia cyanocephala
			Syntomus obscuroguttatus
		Leiodidae	Catops sp.
		Թերթիկաբեղավորներ Scarabaeidae	Onthophagus sp. Blitopertha lineata
		Սևամարմիններ Tenebrionidae	Dailognatha caraboides Blaps lethifeta pterotapha Opatrum geminatum Pachyscelus musiva Pimelia persica Dissonomus picipes
		Anthicidae	Anthicus sp.
		Տերևակերներ Chrysomelidae	Chrysolina cf. marginata Chrysolina sp. Entomoscelis sacra
		Երկարաբեղիկներ Cerambycidae	Dorcadion scabricolle
		Փղիկներ Curculionidae	Psallidium maxillosum Cleoninae sp.
	Թեփուկավոր կամ թիթեռներ Lepidoptera	Ճերմակաթիթեռներ Pieridae	Colias crocea Pontia daplidice Pieris brassicae Pieris pseudorapae



		Nymphalidae	Aglais urticae
			Vanessa cardui

Միջատների տեսակային և քանակական կազմը հիմնականում պայմանավորված է բուսական ծածկույթով:

Կարմիր գրքյան կենդանատեսակներից է՝ Բալդրան *Falco cherrug* J. E. Gray, 1834, Բազեանմանների կարգից, Չայաստանի համար անհետացող տեսակ է, որն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում՝ (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով:



Նկար 4. *Բալդրան Falco cherrug* J. E. Gray

Ուսումնասիրվող և հարակից տարածքները, մարդու գործունեության արդյունքում, բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգերը, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

**9.7 Պատմամշակութային հուշարձաններ:** Արագածոտնի մարզի Թալին քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը ներկայացված է կառավարության 2002թ. մայիսի 29-ի N628 որոշման համաձայն: Ցանկում ներառված է ընդամենը 52 հուշարձան (12 միավոր):

Աղյուսակ 9.

**ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔ**

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	Արտին լեռան հս-աե լանջին	Յ	«Սատանի դար» վայրում
2.				ԲՆԱԿԱՏԵՂԻ	մթա 2-1 հզ մ	1,5 կմ աե-հս.	Յ	Արալի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից 0,5 կմ աջ
	2.1.			դամբարանադաշտ	մթա 4-2 հզ մ		Յ	Կարմրաշեն տանող ճանապարհի խաչմերուկին հարող հատվածում
3.				ԴԱՄԲԱՐԱՆ ԹԱԼԻՆԻ ՄԵՃ	մթա 4-3 հզ մ	աե եզրին	Յ	Երևան-Թալին ավտոճանապարհից ձախ
4.				ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՄԱԼԻՐ ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ	4-20 դդ.	հս մասում	Յ	
	4.1.			եկեղեցի	5 դ.		Յ	Կաթողիկեից հս, պահպանվել են միայն հիմնապատերը
	4.2.			Կաթողիկե	7 դ.		Յ	
	4.3.			պալատ	9-11 դդ.		Յ	Կաթողիկեից 150 մ հվ-աե
	4.4.			գերեզմանոց	4-20 դդ.		Յ	Կաթողիկեի շուրջը
		4.4.1		կոթող	4-5 դդ.		Յ	Կաթողիկեի հվ կողմում
		4.4.2		կոթող	4-5 դդ.		Յ	Կաթողիկեից 30 մ հվ-ամ, պահպանվել է պատվանդանը

	4.4.3	կոթող	4-5 դդ.		Յ	Կաթողիկեի հս կողմում, պահպանվել է պատվանդանը
	4.4.4	կոթող	4-5 դդ.		Յ	Կաթողիկեի հվ կողմում
	4.4.5	կոթող	4-7 դդ.		Յ	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.6	կոթող	4-7 դդ.		Յ	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.7	կոթող	4-7 դդ.		Յ	Կաթողիկեի հվ-աե կողմում, պահպանվել է պատվանդանը
	4.4.8	կոթող	4-7 դդ.		Յ	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.9	խաչքար	9-10 դդ.		Յ	Կաթողիկեից 35 մ հս-ամ, երկատված, ընկած գետնին
	4.4.10	խաչքար	10 դ.		Յ	Կաթողիկեից 20 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
	4.4.11	խաչքար	10-11 դդ.		Յ	Կաթողիկեից հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը և վերնամասի ձախ անկյունը՝ կոտրված
	4.4.12	խաչքար	10-11 դդ.		Յ	Կաթողիկեից 25 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
	4.4.13	խաչքար	11դ.		Յ	Կաթողիկեի հս-ամ կողմում, ընկած գետնին
	4.4.14	խաչքար	13-14 դդ.		Յ	Կաթողիկեի ամ կողմում, կանգնեցված գետնին
5.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	613-615 թթ.	ք.մ.	Յ	
	5.1.	կոթող	4-5 դդ.		Յ	Եկեղեցու հս-ամ կողմում
	5.2.	կոթող	4-7 դդ.		Յ	Եկեղեցու հս կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.3.	կոթող	5-6 դդ.		Յ	Եկեղեցու հվ կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.4.	կոթող	5-6 դդ.		Յ	Եկեղեցու հս-ամ կողմում, խիստ քայքայված
	5.5.	կոթող	6-7 դդ.		Յ	Եկեղեցու հս-ամ կողմում, վերին և ստորին մասերը՝ կոտրված
	5.6.	խաչքար	10-11 դդ.		Յ	արձանագիր, Եկեղեցու խորանում

5.7.		տապանաքար	874 թ.		Յ	Եկդ-ուց 10 մ հվ-ամ, կոտրված՝ 6 մասի
5.8.		տապանաքար	9-10 դդ.		Յ	Եկդ-ուց 10 մմ հվ-ամ, արձանազիր
6.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19 դ. ք.մ.		Տ	
6.1.		զանգակատուն	19 դ.		Տ	կից Է Եկեղեցուն ամ-ից
6.2.		խաչքար	10 դ.		Յ	ագուցված ամ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ
6.3.		խաչքար	13 դ.		Յ	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ
6.4.		խաչքար	13 դ.		Յ	ագուցված աե ճակատին, արտաքուստ
6.5.		խաչքար	19 դ.		Տ	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից ձախ
7.		ՅՈՒՇԱՂՔՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՅԿԱՃՆԵՐԻՆ	1946 թ.	ք.մ.	Տ	քաղաքի սկզբնամասում, ճարտ.՝ Ո. Իսրայելյան
8.		ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՅԿԱՃՆԵՐԻՆ	1979 թ.	հս մասում	Տ	բարձունքի վրա
9.		ՄԱՏՈՒՌ «ՍԱՆԴՈՒՄՏ ԿՈՒՅՍ»	19 դ.	ամ եզրին	Տ	վրկնգ՝ 1991- 1992 թթ.՝ Ամիրբեկ Դերզյանի կողմից
9.1.		խաչքար	7-8 դդ.		Յ	մատուռի ներսում
9.2.		խաչքար	7-8 դդ.		Յ	մատուռի ներսում
9.3.		խաչքար	8 դ.		Յ	մատուռի ներսում, Թալինի հանրահայտ կլոր խաչքարն է
9.4.		խաչքար	8-9 դդ.		Յ	մատուռի ներսում
9.5.		խաչքար	10 դ.		Յ	մատուռի ներսում
10.		ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	19-20 դդ.	1 կմ հս-աե	Տ	Արալլղի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից աջ, պահպանված ջրաղացների թիվը մոտ. 30 է
11.		ՔԱՂԱՔԱՏԵՐԻ ԹԱԼԻՆ	մթա 2-1 հզ մ, մջնդ	հս մասում	Յ	«Ջուլիակ» բլրի ստորոտին
11.1		ամրոց Թալին	մթա 4 դ., 12-16 դդ.		Յ	«Ջուլիակ» բլրի վրա
11.2		դամբարանադաշտ	մթա 2-1 հզ մ, մթա 4-3 դդ.		Յ	«Ջուլիակ» բլրի շուրջը, Ս. Կաթողիկե Եկեղեցուց հս

11.3		ջրամբար	մթա 1 հզմ, վաղ մջնդ		Յ	ամրոցից հս, Թալին- Մաստարա հին ճանապարհին, Ս. Կաթողիկե եկեղեցուց 500 մ հս
12.		ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ. ԹԱԼԻՆԻ ՄԵՃ	13 դ.	հվ-աե եզրին	Յ	«Չայիր» վայրում, Նախկինում սխալմամբ ներկայացվել է Դաշտադեմ գյուղով

Կարևոր է Թալինի դամբարանադաշտը վ (գերեզմանատուն), որը գտնվում է Թալինի քաղաքամերձ տարածքի Հարավ-արևելքում՝ Թալին- Գյումրի ճանապարհի երկայնքով:

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են: Գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը Արագածի ալպիական արգելավայրն է՝ մոտ 4կմ բարձրության վրա: 500մ հեռավորության վրա՝ Թալին-Դաշտադեմ ճանապարհին կից գտնվում է ամենամոտ պատմամշակութային հուշարձանը՝ Թալինի քարավանատունը:

**9.8 Հատուկ պահպանվող տարածքներ:** Մարզի տարածաշրջանում է գտնվում Արագածի ալպյան արգելավայրը, բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Բարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Նկար 8.



Գործունեության տարածքին ամենամոտ պահպանվող տարածքը Արագածի ալպիական արգելավայրն է՝ մոտ 4կմ բարձրության վրա:

**«Ագարակ» պատմամշակութային արգելոց»-ը** գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղական համայնքների վարչական տարածքներում, Երևան-Աջտարակ-Գյումրի մայրուղու երկու կողմերում, Ամբերդ գետի աջ ափին, հրաբխային տուֆե ելուստներից կազմված ժայռոտ հրվանդանի վրա: Հուշարձանի /պետ. ցուցիչ՝ 2.4.1/ հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ բնակատեղիի ողջ տարածքը և շրջակայքն ամբողջությամբ պատված են ժայռափոր ու քարակոփ կառույցների հսկայածավալ համալիրներով, որոնց մեծ մասը շաղկապվում է Ագարակի վաղ բրոնզեդարյան բնակատեղիի հետ: Առկա են ժայռափոր խորշեր, դեպի այդ խորշերը տանող աստիճանահարթակներ և այլ նշանակության կերտվածքներ: Բոլոր այդ կերտվածքների, ինչպես նաև շրջանաձև, պայտաձև, մեանդրաձև փորվածքների, այդ փորվածքները միմյանց կապող առվակների կամ եռագագաթ, սեղանաձև զոհարանների շնորհիվ բնական լանդշաֆտը վերածվել է հսկա կոթողի:

**9.9 Բնության հուշարձաններ.** համաձայն ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի՝ «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ Արագածոտնի մարզում առկա են. 23 երկրաբանական, ջրաերկրաբանական և ջրագրական, բնապատմական հուշարձաններ:

Աղյուսակ 10

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արիաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» Էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին

10.	«Մեծ Արտենի» Էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
11.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
12.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
13.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
14.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա
15	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
16	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
17	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
18	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
19	«Մեծ Արտենի» Էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
20	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
21	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
22	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
23	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

Գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը Արագածի ալպիական արգելավայրն է՝ մոտ 4կմ բարձրության վրա:

**9.10 Աղմուկ և թրթռում.** գործունեության տարածքը հեռու է բնակավայրերից և գործող ճանապարհային ցանցերից: Այդ պատճառով ելակետային իրավիճակում տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն, աղմուկի և տատանումների աղբյուրները բացակայում են:

## 10. Տարածքի սոցիալ-տնտեսական բնութագիրը

**Թալին քաղաքը** (2020թ. տարեսկզբի դրությամբ՝ 4.1 հազ. մարդ) գտնվում է Արագած լեռան հարավարևմտյան լանջին (Երևանից 65 կմ հեռավորությամբ): Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը, առկա է բնական աղամանդի

մշակութամբ զբաղվող ձեռնարկություն: Չարգացած է մենդի արդյունաբերությունը: Ունի Չանախ տեսակի պանրի և կաթնամթերքի գործարան: Համախառն արտադրանքի մեծ մասը տալիս է գյուղատնտեսությունը: Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն, գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն, հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն, քանի որ ոռոգման ջրի բացակայության պատճառով հացահատիկի բերքատվությունը շատ ցածր է և ոչ երաշխավորված, անասնակերը գնովի, ինչի արդյունքում ստացվում է բարձր ինքնարժեքով գյուղատնտեսական արտադրանք, որոնց ծավալները տնտեսապես շահավետ չէ ավելացնել:

Համայնքում հիմնականում զարգացած է անասնապահությունը, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Վերոնշյալ ոլորտներն ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով, վերամշակման տեխնոլոգիաների ու ոռոգման ջրի բացակայությամբ: Ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի 10%-ը ինքնահոս ջրերով: Ոռոգելի տարածքի 90%-ը չի ոռոգվում, ոռոգման ցանց չունենալու պատճառով:

Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ համայնքի վարչական տարածքի մակերեսը 4,395.83 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության՝ 3,762.45 հա, որից վարելահողեր՝ 1,190.30 հա, բազմամյա տնկարկներ՝ 0.31 հա, արոտավայրեր՝ 2,421.70 հա, այլ հողատեսքեր՝ 150.14 հա: Մշակում են նաև պտղատու այգիներ: Համայնքում առաջնային են համարվում աշխատանքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը, խմելու և ոռոգման ջրի ջրագծերի վերանորոգումը, փողոցային լուսավորության խնդիրը, քաղաքի գազաֆիկացումը:

Թալին համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Քաղաքը հարուստ չէ մշակութային օջախներով, ունի մեկ մշակութային կենտրոն, որն ունի վերանորոգման, գազաֆիկացման, լոկալ ջեռուցման, ինչպես նաև կահավորման անհրաժեշտություն:

Համայնքի զարգացման համար հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են՝

- համայնքի ֆինանսական միջոցների սղությունը,
- ոռոգման ջրի և ցանցի անբավարար վիճակը կամ բացակայությունը,
- գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար վիճակը կամ բացակայությունը,
- համայնքում առկա արդյունաբերական ձեռնարկությունների ոչ լրիվ հզորությամբ գործելը կամ ընդհանրապես չգործելը,
- ներքաղաքային ճանապարհների անբավարար վիճակը:

Վերը նշվածի արդյունքում համայնքում բարձր է գործազրկության և արտագաղթի մակարդակը:



Թալին համայնքի բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցն ըստ ժամանակահատվածների (%)

Քաղաք	2002-2006թթ.	2007-2011թթ.	2012-2015թթ.
Թալին	-13,9	-13,3	-26,1

Համաձայն Թալին համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագրի համայնքում կան 4828 աշխատուճակ մարդիկ, որոնցից 3768-ը գործազուրկ են:

**11. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը:**

ՇՄԱԳ-ի շրջանակներում դիտարկվել է նախատեսվող գործունեության գրոյական, այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

**Չրոյական տարբերակ** նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում.

- կհանգեցնի առաջին 20 տարվա ընթացքում այլ աղբյուրներից մոտ 198,5 ԳՎտ.Ժ էլեկտրաէներգիայի արտադրմանը: Նշված քանակի էլեկտրաէներգիայի պահանջարկը հնարավոր կլինի ապահովել շրջակա միջավայրի վրա առավել ազդեցություն ունեցող էներգիա արտադրող այլ գործունեությունների շնորհիվ՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան և այլն, ինչն իր հերթին կհանգեցնի շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների աճին:
- Արևային էլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը նպաստելու է օդում ածխաջրածինների կրճատմանը, որոնք արտանետվում են էներգիայի ստացման այլ աղբյուրներից: Ածխաջրածինները նպաստում են կլիմայի փոփոխությանը՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:
- Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է ամենահեռանկարային այլընտրանքային ճյուղը: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տեսության 40 տարի հետո արևային էներգետիկան կարտադրի ամբողջ համաշխարհային էներգետիկ պահանջարկի շուրջ 20-25%-ը, ինչն իր հերթին կնպաստի տարեկան 6 միլիարդ տոննա ածխաջրածնային գազերի կրճատման:

**Տարածքի այլընտրանք:** Տարածքն ընտրված է ելնելով արևային էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններից: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը՝ 1500մ, նպաստավոր պայմաններ են ստեղծում արևային էներգետիկայի զարգացման համար: Տարածքը գերարածեցված է, գտնվում մարդու ակտիվ գործունեության գոտում:

Հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ ենթակառուցվածքների է:

**Ընտրված տարբերակի հիմնավորումը:** Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, և այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, որոնք անվտանգ են շրջակա միջավայրի համար: Արևակայանի կառուցման դեպքում.

- ԳՅ-ում հանրության համար այլընտրանքային էներգիան դառնալու է հասանելի,
- կապահովի բնակչության էներգասպառման հեռանկարային պահանջարկը,
- կհանգեցնի բնակչության կոմունալ բեռի թեթևացմանը, ֆինանսական միջոցների ինայմանը և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Վերականգնվող էներգետիկ համակարգերը, որոնց թվին են պատկանում արևային էլեկտրակայանները, գործնականում արդեն լայն կիրառում ունեն աշխարհում:

Աշխարհը հիմնված է էներգետիկ պաշարների օգտագործման վրա, որոնք հետզհետե սպառվում են և չեն վերականգնվում: Էներգիայի ստացման այլ մեթոդները վնասում են բնությանը և մարդկանց առողջությանը, միաժամանակ սպառնում երկրի բնական պաշարների նավագեցմանն ու անհետացմանը: Ներկայումս էլեկտրաէներգիայի 70%-ն աշխարհում արտադրվում է հանածո վառելիքների հիման վրա (նավթ, ածուխ, բնական գազ): Ջերմային էներգիայի արտադրությունում հանածո վառելիքների մասնաբաժինը 90% է:

Հայաստանում ըստ 2012թ. ցուցանիշների՝ էլեկտրաէներգիայի արտադրության 42.3% ստացվել է բնական գազից, 28.9%՝ հիդրոէներգիայից, 28.8%՝ միջուկային էներգիայից: Մեկ մարդու հաշով էներգիայի ծախսի երկրների ցուցանիշների ցանկում, Միջազգային էներգետիկ ընկերության (International Energy Agency) տվյալներով Հայաստանը գնտվում է 82-րդ տեղում՝ 1606.366 ԿՎ/ժ ցուցանիշով:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև կրճատում է էներգիայի ստացման ծախսերը: Էներգաինսայդությունն էապես կարող է նպաստել և՛ շրջակա միջավայրի, և ամբողջ մոլորակի բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներկայիս տեխնոլոգիաները, որոշակի ներդրում կատարելուց հետո, թույլ են տալիս նույնիսկ տնային տնտեսություններում ունենալ սեփական, բնական էներգիայի ստացման աղբյուրներ: Էներգիայի և ռեսուրսների անխնա սպառման հետևանքները գալիք սերունդների համար կարող են ունենալ լուրջ բացասական ազդեցություն, ուստի այլընտրանքային, վերականգնվող այդ թվում արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Գործունեության առաջին 20 տարվա ընթացքում կայանն արտադրելու է մոտ 198.5 ԳՎտ.ժ էլեկտրաէներգիա, ինչը կլրացնի հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը, օգուտների և վնասների համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ արևային էլեկտրակայանների օգուտները շատ ավելին են, քան պատճառվող վնասները:

Ընտրված տարածքը ևս բավականին նպաստավոր է արևային էներգետիկայի զարգացման համար, շրջակա միջավայրի վրա հնարավոր ցածր և աննշան ազդեցություններով:

## 12. Բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի նկարագրությունը

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

**Նյութեր.** Շինարարության փուլում օգտագործվելու են նաև այլ շինարարական նյութեր՝ ամրան, մետաղ, շինարարական քար, ավազ, ցեմենտ, շեբեն, պողպատե խողովակներ, թիթեղներ, այլումինե հաղորդալար, ներկանյութեր: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, պահվելու են փակ ծածկով մեքենաների թափքերում և այնտեղից հանվելու են միայն օգտագործման դեպքում, տեղադրելով տակդիրների վրա:

Շինարարության փուլում օգտագործվելու է բետոն՝ կայանում արևային վահանակները կրող կոնստրուկցիայի հիմքերի, հենասյուների, տրանսֆորմատորի յուղընդունիչի փոսի, մալուխային խրամուղու հատվածների կողապատման, դիտահորերի համար: Բետոնը բերվելու է պատրաստի վիճակում՝ համապատասխան մասնագիտական կազմակերպությունների բետոնախառնիչներով:

Հիմքերի նախաշերտի և վերնաշերտի ամրացման նպատակով օգտագործվելու է նաև 805մ<sup>3</sup> ծավալի ավազ և ծավալի մանրախիճ: Մանրախիճի տեղադրումը կատարվելու է տոփանումով:

Հիմքերը լցվելու են բազալտի խճով, հետո՝ բետոնը:

## 13. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$V_S = Z_{ԱԳ} + Z_{ԱԳ} + O_{ԱԳ},$$

որտեղ՝

$V_S$ -ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,  $Z_{ԱԳ}$ -ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արևային կայանի և ՕԳ շինարարության ընթացքում հողերի աղտոտում կամ վնասում չի նախատեսվում:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արևային կայանի և ՕԳ շինարարության ու շահագործման ընթացքում աղտոտված արտահոսք չի առաջանում և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

### **Մթնոլորտային օդ**

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Արևային կայանի և ՕԳ շահագործման ընթացքում արտանետումներ չեն առաջանում: Արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \sum_{i=1}^n \Phi_i \cdot \sum_{j=1}^m \Psi_{ij} \cdot \rho_j$$

որտեղ՝

**U**-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

**$\sum_{i=1}^n \Phi_i$** -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն վերոնշյալ կարգի 9-րդ աղյուսակի՝ արոտավայրերի համար ընդունվում է 0.1:

**$\sum_{j=1}^m \Psi_{ij}$** -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝ անօրգանական փոշու համար՝ 10, ածխածնի օքսիդի համար՝ 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 41.5:

**$\rho_j$**  –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

**$\Phi_i$** -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն՝  $\Phi_i = 1000$  դրամ:

$\rho_j$  գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P_i = q(3 S_{Li} - 2 U_{\theta Li}), S_{Li} > U_{\theta Li}$$

որտեղ՝

$U_{\theta Li}$  -ն  $i$ -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումները քիչ են և կրում են ժամանակավոր բնույթ, փաստացի արտանետումները ընդունվում են որպես  $U_{\theta Li}$ :

$S_{Li}$ -ն  $i$  նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի ժամանակ առանձնացնել են շարժական և անշարժ աղբյուրները:

Շինարարության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկը, ինչպես նաև համախառնասխան ցուցանիշներով արտանետվող նյութերի անվանումները ներկայացվում են աղյուսակ 12-ում:

Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման

Աղյուսակ 12

Արտանետվող նյութի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ <sub>i</sub>	Շ <sub>q</sub>	Փ <sub>g</sub>	Տնտեսական վնասը (ՀՀ դրամ)
	S <sub>i</sub>	q	Ք <sub>i</sub>				
Ածխածնի մոնօքսիդ	0.0000 25	3	0.000075	1	0.1	1000	0.0075
Ածխաջրածիններ	0.0058	3	0.0174	3	0.1	1000	5.22
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.029	3	0.087	12.5	0.1	1000	108.75
Պինդ մասնիկներ	0.003	3	0.009	41.5	0.1	1000	37.35
Ծմբային անհիդրիդ	0.32	3	0.96	16.5	0.1	1000	1584
Անկազմակերպ	0.048	1	0.048	10	0.1	1000	48

փոշու արտանետումներ							
Ընդամենը	1783.328						

Ըստ կատարված հաշվարկների շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է 1783.328 դրամ:

#### **14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)**

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետությանը վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

110կվ և 20մ երկարության օդային գծի Էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հետևյալն են՝

- Կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազանի վրա ազդեցություն:
- Կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցություն:
- Լանդշաֆտի փոփոխություններ:

- Կառաջանան անևշան քանակությամբ շինարարական թափոններ:
- Կայանի ապամոնտաժումից հետո առաջացող թափոններ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.** կայանի կառուցման շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝

- 3 հորատող,
- 1 հարթեցնող,
- 1 ինքնաթափ

Դրանք կարող են լինել կապալառու կազմակերպության տրանսպորտային միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Աշխատանքների կատարման համար առանձին շինհրապարակ չի նախատեսվում: Շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաները և տեխնիկան կայանվելու են հարակից գրունտային ճանապարհի եզրին, աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Վերջինս հնարավորություն կստեղծի խուսափելու ճանապարհների ավելորդ ծանրաբեռնվածությունից, ինչը կբավարարի և կսպասարկի շինարարական աշխատանքների կատարման ընթացքը:

**14.1 Օդային ավազան.** գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Հայեկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույց<sup>1</sup> համաձայն մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Թալին համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են<sup>2</sup>:

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը 1,2-1,8 կմ հեռու է բնակելի տարածքներից, իսկ համայնքի բնակչությունը կազմում է ընդամենը 4.100 մարդ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է

գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Համաձայն հաշվարկների անկազմակերպ փոշու արտանետումները հավասար են 0,048տ/շին. ժամանակահատված կամ 0,19գ/վրկ:

Շինարարության ընթացքում շինարարական տեխնիկայի արտանետումները ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 13. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /208ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.034	0,000025
CH (ածխաջրածիններ)	8.403	0.0078	0.0058
NO <sub>2</sub> (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	0.039	0,029
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.004	0,003
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,19	0,048

**14.2 Զրային ռեսուրսներ.** գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Մաստարա գետն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 7 կմ հեռավորության վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում շշերով: Կենցաղային և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է հատուկ մեքենաներով (ջրի ցիստեռ)՝ ըստ պահանջի:

Շինարարության և շահագործման փուլերում խմելու ջրի պահանջը հաշվարկվում է հիմք ընդունելով աշխատողների (շինարարության փուլում 8 մարդ և շահագործման փուլում՝ 6 մարդ) խմելու և կենցաղային նպատակներով աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից՝ 200լ կամ 0,2մ<sup>3</sup>:

$$V_y = n \times 200 \text{ կամ } 0, 2 \text{մ}^3$$

Որտեղ՝ n- աշխատողների թիվն է՝ 8/6

Շինարարության փուլում ջրածախսը կկազմի.

$$V_y = 8 \times 200 = 1600 \text{լ/օր կամ } 1,6 \text{մ}^3 \text{ /օր կամ } 153,6 \text{ մ}^3 \text{ շին/ժամ} :$$



Շահագործման փուլում

$$V_y = 6 \times 200 = 1200 \text{լ/օր կամ } 1,2 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ընդհանուր ջրօգտագործումը շինարարության և շահագործման փուլերում կազմելու է 2,8 մ<sup>3</sup>/օր:

Գործունեության իրականացման շահագործման փուլում աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար ջուրը բերվելու է շերտով և բալոններով՝ ըստ կարիքի:

Փորման աշխատանքների արդյունքում հանվելու է ընդհանուր 2230,6մ<sup>3</sup> ծավալի հող/գրունտ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով կիրականացվի հողի և գրունտի խոնավեցում:

Շահագործման փուլում ըստ անհրաժեշտության (չոր եղանակներին) կատարվելու է ճանապարհի ջրցան:

Նախատեսվում է իրականացնել ջրցան 300-500մ երկարությամբ գրունտային ճանապարհի ջրցան, որի մակերեսը կազմում է.

$$500 \times 3,5 = 1750 \text{մ}^2$$

Փոշենստեցման նպատակով ջրի ծախսը 1մ<sup>2</sup> տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ<sup>2</sup>, հետևաբար՝

$$1750 \times 0,5 = 0,9 \text{լ/մ}^2 \text{ ջուր:}$$

Հողային աշխատանքների կատարման ժամանակ (10օր) կատարվելու է 2230,6մ<sup>3</sup> գրունտի հանում, որի խոնավացման համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$2230,6 \text{մ}^3 \times 8 \text{լ/մ}^3 = 17844 \text{լ կամ } 17,8 \text{մ}^3$$

Տարածքների ջրցանը և հողերի խոնավացումը կատարվելու է այնպես, որպեսզի ջրօգտագործման արդյունքում չառաջանան արտահոսքեր:

Շինարարության ավարտից հետո կիրականացվի մոդուլների մաքրում՝ ջրով: Շահագործման ընթացքում ոչ ավել քան տարին երկու անգամ՝ 1լ/մոդուլ հաշվարկով կկատարվի մոդուլների ջրով մաքրում: Մաքրումը կատարվելու է բերովի ջրով՝ պայմանագրային հիմունքներով:

**Կեղտաջրերի հեռացում.** շինարարության փուլում տեղադրվելու է 90x90 չափերի բիոզուգարան, որի սպասարկումը շինարարության և շահագործման փուլերում կատարվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության փուլում կառաջանան 1,52մ<sup>3</sup> /օր ծավալով կոյուղաջրեր, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

W կենց.կոյուղի = Wկենցաղ. x (1 – Կ), որտեղ՝

Կ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

$$W_{\text{կենց.կոյուղի}} = 153,6 \text{մ}^3 \times (1 - 0,05) = 145,92 \text{մ}^3/\text{շին ժամ, միջին օրական՝ } 1,52 \text{մ}^3:$$

Շահագործման փուլում կառաջանան 1,14 մ<sup>3</sup>/օր .

$$W_{\text{կենց.կոյուղի}} = 1,2 \text{մ}^3 \times (1 - 0,05) = 1,14 \text{մ}^3/\text{օր}$$

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխության չի ենթարկվելու, ուստի արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

**14.3 Հողային ռեսուրսներ.** Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով: Տարածքում բացակայում է բուսահողը:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Համաձայն նախագծային լուծումների՝ արևակայանի կառուցման ընթացքում, քանդման արդյունքում առաջանալու է ընդհանուր 2230,6մ<sup>3</sup> ծավալի հողային զանգված.

- 2514զծ ՓՀ մալուխների համար՝ 1410մ<sup>3</sup>
- 626զծ ՀՀ մալուխի համար՝ 296մ<sup>3</sup>
- ԱԼ մալուխի համար՝ 472,5մ<sup>3</sup>
- Հենասյուների տեղադրում՝ 0.088մ<sup>3</sup>
- Տրանսֆորմատորի տեղադրում՝ 32մ<sup>3</sup>
- Մալուխային խրամուղի՝ 5մ<sup>3</sup>
- Յուղընդունիչի տեղադրում՝ 2մ<sup>3</sup>
- ցանցի խրամուղի՝ 13մ<sup>3</sup>

Հողային զանգվածի մի մասը՝ 1474մ<sup>3</sup> օգտագործվելու է հետլիցքի՝ անցքերի և խրամուղիների լցման համար: Իսկ մնացած 756,6մ<sup>3</sup> հողն օգտագործվելու է տարածքների վերականգնման և բարեկարգման համար:

Հողաբուսաշերտի բացակայության հանգամանքով պայմանավորված կայանի կառուցման ընթացքում հողային ռեսուրսների վրա այլ ազդեցություններ չեն գնահատվում:

**14.4 Կենսաբազմազանություն.** Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու համար ուսումնասիրվել են տվյալ շրջանին բնորոշ կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը, հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից, որը հիմք է ծառայել նաև անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների նախատեսման համար:

Արևային կայանի կառուցման ենթակա տարածքն անտառածածկ չէ: Տարածքում գրեթե բացակայում է խոտածածկը: Մասնակիորեն առկա է տարախոտային բուսականությունը: Այն օգտագործվել է, որպես արոտավայր, որը ժամանակի ընթացքում գերարածեցվել է: Տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները, կենդանիների բնադրավայրերը: Չկան հատուկ պահպանվող

և զգայուն Էկոհամակարգեր: Շինարարությունը տևելու է չորս ամիս, ուստի ազդեցությունները լինելու են աննշան, կրելու են կարճատև և ժամանակավոր բնույթ:

Արևային Էլեկտրակայան կառուցելու արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային Էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 25-30 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Մասնակիորեն լուսավորված տարածքներում ստեղծվելու է բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ են գտնելու թե՛ տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել, որոշակիորեն պահպանվելու են նաև բուսատեսակների առկա տեսակային կազմը:

Ստեղծված նոր Էկոհամակարգի վրա որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխում Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածր եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով, սակայն դրանք կենսաբազմազանության առումով Էական փոփոխություն չեն կարող առաջացնել: Այսպիսով արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր Էկոհամակարգ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար կայունանալու է: Նկատի ունենալով տարածքի գերարածվածությունը, նոր Էկոհամակարգի ձևավորման հնարավորությունը և նպաստավոր պայմանները, ենթադրվում է, որ կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք առավել քան դրական միտում են ունենալու:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

#### **14.5 Լանդշաֆտ.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արագածոտնի մարզի Թային համայնքի վարչական տարածքում՝ դեպի Դժմասար համայնք: Հայցվող տարածքը գտնվում է Թային քաղաքի մերձակայքում, հյուսիսային լայնության 40022'04.2" և արևելյան երկայնության 43051'24.1" կոորդինատներով, ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառաջանան պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր:

Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն՝ պայմանավորված տարածքում արևային մոդուլների տեղադրումով: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից՝ հեռավորության պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը Էական չի լինի:

**14.6 Թափոններ.** արևային կայանի կառուցման շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով՝ կյուլթերի մնացորդներ (ավազ, շեբեն, ցեմենտ,

մետաղյա լարեր, պլաստմասե իրեր)՝ ամսական 1տ,

- աղտոտված լաթեր, պարկեր,
- կենցաղային աղբ- կառուցապատման փուլում՝ 408 կգ, շահագործման փուլում՝ 1.224կգ/տարի:

Շինարարական կյուլթերի մնացորդները (մետաղական մասեր լաթեր, այլ իրեր) հավաքվելու են հատուկ տարողությունների կամ պարկերի մեջ՝ տակդիրների վրա: Շինաղբը պայմանագրային հիմունքներով տեղափոխվելու է Թալինի համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ աղբյուսներում: Հավելված 6:

Կենցաղային աղբը հավաքվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից՝ ամեն օր:

**Շահագործման փուլում** կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխվելու է աշխատողների կողմից:

Արևային Կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի համաձայն հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 15տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղընդունիչի տարողությամբ:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4):
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4):
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03):

- Սև մետաղի ջարդոն (4-րդ դաս՝ 35131100 01 00 4):

Ֆոտովոլտային կայանի տարածքում օգտագործված վտանգավոր թափոնները մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կուտակվելու են տարածքում նախատեսված բետոնապատ մակերեսի վրա՝ ծածկված վիճակում: Թափոնների ազդեցությունները նվազագույնի հասցնելու կամ բացառելու նպատակով նախատեսված են համապատասխան միջոցառումներ:

**14.7 Լուսավորություն և ջեռուցում.** Շինարարական աշխատանքները կատարվելու են տարվա շոգ ամիսներին և ցերեկային ժամերին, ուստի շինարարության փուլում լուսավորության և ջեռուցման անհրաժեշտություն չի լինելու: Շահագործման փուլում արևային կայանի տարածքն ապահովված է լինելու լուսավորության և տեսահսկման սարքերով, տեղադրվելու է տնակ, որի ջեռուցումը և լուսավորությունը կատարվելու է էլեկտրական սարքերի միջոցով: Վերջինս շրջակա միջավայրի վրա որևէ ազդեցություն չի ունենալու:

**14.8 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.** շինարարական

աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ:

Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում ապահովելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման և շահագործման փուլերում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

**14.9 Արտակարգ իրավիճակներ.** Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների՝ կլիմայական ծանր պայմաններ, հրդեհների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված տեխնաժին երևույթների, հեղուկ կյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել հնարավոր հրդեհային իրավիճակների, կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

**14.10 Աղմուկ և թրթռում.** ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով: Ելակետային իրավիճակում տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն:

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները:

**Շինարարական աշխատանքների** ընթացքում ավտոմեքենաների և սարքավորումների աշխատանքից աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Այնուամենայնիվ, հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ Դաշտամեջը՝ 1,8կմ և Թալին համայնքը՝ 1,2 կմ:

**Շահագործման** փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ կայանը գտնվում է բնակավայրերից բավականին մեծ հեռավորության վրա, ուստի հատուկ միջոցառումների կարիք չի առաջանալու:

**14.11 Էլեկտրական և մագնիսական դաշտ:** ՕԳ և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ 110ԿՎ Օդային գիծն ունի ընդամենը 20մ երկարություն, ինչը չի կարող զգալի Էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն որոշման՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ պահանջներին համապատասխան:

**14.12 Պատմամշակութային և բնության հուշարձաններ:** Գործունեության վայրը չի առնչվում Էկոլոգիապես զգայուն տարածքների՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ:

Համաձայն ՀՀ «Գիտությունների ազգային ակադեմիա հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2019թ. դեկտեմբերի 19-ի № 2470-388 գրության՝ գործունեության տարածքի կենտրոնական հատվածում և արևմտյան եզրին առկա են թեք շարվածքով պատաշարեր, որոնք հնագույն շինության «Օդապարուկ» կոչված կառույցի մաս են կազմում: Միաժամանակ ՊՈԱԿ-ը չի առարկում արևային կայանի կառուցմանը, լիազոր մարմնի հետ հուշարձանի պահպանության պարտավորագիր կնքելու պայմանով: Ըստ նույն կառույցի 2021թ. սեպտեմբերի 24-ի № 2470-266 գրության կատարվել է տարածքի կրկնակի տեղազննություն, որով հաստատել է դամբարան **/Հավելված 11/** հիշեցնող կառույցի առկայությունը: Միաժամանակ առաջարկվում է, որ նշված օբյեկտների երաշխավորված պահպանության համար նոր սեփականատիրոջ հետ կնքվի վերջիններիս պահպանության պարտավորագիր, ինչը իրականացվելու է:

**14.13 Սոցիալական ազդեցություն.** Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում: Այն գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին, Արտեմի լեռան մոտ՝ ծովի մակարդակից 1585 մ բարձրության վրա: Կլիման չափավոր ցամաքային է: Հիմնականում զարգացած է անասնապահությունը՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, թռչնաբուծությունը:

Համայնքի բնակչությունը կազմում է 4100 մարդ: Բաղաքի բնակչությունը 2012-2016թթ. նվազել է շուրջ 9.4%: Բարձր է գործազրկության և արտագաղթի մակարդակը:

Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, գործարարությունը լուրջ ազդեցություն չի ունեցել, քանի որ գործարարությամբ զբաղվողների թիվը համայնքում փոքր է, ապահովում է հանրապետությունում արտադրված արտադրանքի 1.9%-ը:

Արևային կայանի կառուցման ժամանակ հողի ձեռք բերման կամ փոխհատուցման հետ կապված խնդիրներ կամ խոչընդոտներ չեն առաջանալու, նկատի ունենալով որ այն տեղակայվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում՝ «Դիզափայտ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, գործառնական նշանակությամբ՝ Էներգետիկայի հողերում: Նախատեսվող գործունեությունը համահունչ է «Հայաստանի

հանրապետության Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագիր»-ի դրույթներին: Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է մարզում կարողությունների, արդյունաբերության և այլ ոլորտների զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների խթանման համար վարկային երաշխավորությունների, տեղեկատվության և խորհրդատվությունների տրամադրում, գործարար ուսուցում: Նախատեսված են արտասահմանյան կազմակերպությունների հետ երկխոսության ու համագործակցության կայացման խթանում, համայնք-բիզնես կապի սերտացում:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ: Նախագծի հիմնական սոցիալական ազդեցությունները հետևյալն են՝

- Արտավայրերի սահմանափակում:
- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ արտավայրերի ճանապարհին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հետ:

Մարզում արևային կայանների հիմնումը կստեղծի աշխատատեղեր սոցիալապես անապահով խավի համար և որոշակիորեն կնպաստի համայնքի հետագա զարգացմանը:

Կայանի կառուցման շինարարական աշխատանքներին ներգրավելու են 8 մարդ: Աշխատանքները կատարվելու են 6 օրյա և 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով: Շինարարության փուլում տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ): Շահագործման փուլում կայանում աշխատելու է 6 մարդ՝ 2 պահակ՝ 2 հերթափոխով և 2 մոնիթորինգի մասնագետ:

**14.14 Բարեկարգում.** արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյունների եզրային մասերի լիցք և հարթեցում:

Գործունեության տարածքը ցանկապատվելու է՝ 1167գմ «Ռաբիցա» տեսակի մետաղական ցանցով, 350 հատ մետաղական կանգնակներով, դարպասով և դռնակով:

**14.15 Գումարային ազդեցություններ.** գործունեության վայրից՝ մոտ 600մ հեռավորության վրա գտնվում է այլ արևային կայան: Տարածքում այլ արտադրություններ չկան: Գոյություն ունեցող արևային կայանի հետ որևէ գումարային ազդեցություններ չկան: ՇՄԱԳ հաշվետվությունը ցույց է տալիս, որ նախագիծը շրջակա միջավայրի վրա կունենա ցածր ազդեցություն, եթե իրականացվեն առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումները:

Համաձայն ՇՄԱԳ-ի՝ բացասական ազդեցություններն առաջանում են հիմնականում շինարարականության փուլում: Շահագործման փուլում, ակնհայտ է դրական ազդեցությունը, որն է՝ Էկոլոգիապես ավելի անվնաս և հուսալի Էներգիայի մատակարարում:

Արևակայանի կառուցման ազդեցությունը (գնահատման 0-5 ցուցանիշներով) շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կարելի էրկայացնել հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 7.

Շրջակա միջավայր	Հավանական ազդեցությունը/A/	Ազդեցության հետևանքը/B/	Ազդեցության գնահատումը/A *B/	Ազդեցության աստիճանը
<b>Շինարարության փուլ</b>				
1.Օդային ավազան	1	0	0	ցածր
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.Հողային ռեսուրսներ	2	1	2	միջին
4.Կենսաբազմազանություն	1	1	1	ցածր
5. Լանդշաֆտ	1	1	1	ցածր
6. Սոցիալական	0	0	0	դրական
<b>Շահագործման փուլ</b>				
1.Օդային ավազան	0	0	0	չունի
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.հողային ռեսուրսներ	1	1	1	ցածր
4.Կենսաբազմազանություն	1	0	0	չունի
5. Լանդշաֆտ	1	1	1	ցածր
6. Սոցիալական	0	0	0	դրական

### 15. Շինարարության փուլի ժամանակացույցը

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 4 ամիս՝ ըստ ժամանակացույցի:



Արևային կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 4 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

№	Աշխատանքի անվանումը	Աշխատանքներ տևողությունը ամիսներով															
		I ամիս				II ամիս				III ամիս				IV ամիս			
1	Նախնական ինժեներական և հողային աշխատանքներ	■	■														
2	ԱՖԷԿ-ի 110/10 կՎ և 10/0,8 կՎ լարման ենթակայանի շինարարություն			■	■	■	■	■	■								
3	Կրող կոնստրուկցիաների հիմքերի հորատում, հենսյունների տեղակայում, շինաղբի տեղափոխում		■	■	■	■	■	■	■	■	■						
4	Կրող կոնստրուկցիաների ձգում, տարածքի ցանկապատում					■	■	■	■	■	■	■	■				
5	Մալուխների անցկացում			■	■						■	■	■				
6	Հողանցման ցանցի մոնտաժ					■	■										
7	Արտաքին լուսավորության համակարգ							■	■								
8	Արևային վահանակների տեղադրում								■	■	■	■	■	■	■		
9	Տարածքի բարեկարգում													■	■	■	
10	Գրունտային ճանապարհի նորոգում												■	■			
11	Ենթակայանի և ղեկավարման շենքի ներքին հարդարում											■	■	■	■		
12	Ինվերտորների տեղադրում և էլեկտրական միացում											■	■	■			
13	Տրանսֆորմատորների էլեկտրական միացում												■	■	■		
14	Տեսահսկման համակարգի մոնտաժում												■	■			
15	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ													■	■	■	

## **16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, սվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը**

Գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի կառուցման ընթացքում օդային ավազանի աղտոտման, ջրային և հողային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման, իսկ շահագործման փուլում կայանի անվտանգ շահագործման հետ: Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ կայանից մոտ 600 հեռավորության վրա գործում են այլ արևային կայան: Տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկելով էրոզիայի: Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

### **16.1 Շինարարության փուլ**

**16.1.1 Օդային ավազան.** գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

**16.1.2 Հողային ռեսուրսներ.** գործունեության իրականացման վայրում հողի բերրի շերտը բացակայում է: Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողային զանգվածը կուտակվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում,

- այն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարական կյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

**16.1.3 Ջրային ռեսուրսներ.** Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ տարածքում բացակայում են գրունտային և մակերևութային ջրահոսքերը: Շինարարության փուլում տեխնիկական ջրի(ջրցան) պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ աշխատողների խմելու ջուրը կմատակարարվի տարաներով(շշերով)՝ ըստ պահանջի:

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի,
- շինարարության և շահագործման փուլերում աշխատողները կօգտվեն շինարարության փուլում տեղադրվող բիոզուգարանից, որը մաքրվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

**16.1.4 Կենսաբազմազանություն.** գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվելու է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են համապատասխան գերատեսչություններին,
- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,
- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխվելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի,

- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

**16.1.5 Թափոններ.** շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվելու է.

- վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակում տարածքում չի նախատեսվելու,
- մետաղական թափոնները կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,
- շինարարական թափոնները(շինադբ)՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, մինչև աղբավայր տեղափոխելը կկուտակվեն տարածքում հատուկ պարկերի կամ տարողությունների մեջ, կտեղադրվեն տակդիրների վրա՝ ծածկի տակ,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր,
- շինարարության ժամանակ առաջացած կենցաղային աղբը ամենօր կտեղափոխվի Կապալառուի կողմից:

**16.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.** գործունեության տարածքում իրականացվել են կրկնակի հնագիտական հետախուզական ուսումնասիրություններ, որի արդյունքում հայտնաբերվել է հնագույն շինություն, իսկ սեփականաշնորհված հողամասից անմիջապես արևմուտք, Էլեկտրական սյան մոտ առկա է ևս մեկ դամբանաթումբ՝ կենտրոնում հստակ գծագրվող խցով և ծածկասալերով:

Համապատասխան գրություններով ամրագրված է, որ լիազորված մարմինը չի առարկում Արևային կայանի կառուցմանը՝ նշված հնագիտական օբյեկտների համար լիազորված մարմնի հետ հուշարձանի պահպանության պարտավորագիր կնքելու պայմանով:

Շինարարական աշխատանքների ընթացքում ևս հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Գոյություն ունեցող դամբարանաշերտի տարածքում՝ արևակայանի շինարարության և շահագործման փուլերում բացառվելու են.

- շինարարական աշխատանքները,
- հողային շերտի խախտումները,
- կենցաղային և շինարարական աղբի կուտակումները
- Ձեռնարկողը, մինչև շինարարական աշխատանքների սկսելը, լիազորված մարմնի հետ կնքելու է պարտավորագիր՝ հնագիտական օբյեկտների պահպանության նպատակով:

**16.1.7 Աղմուկ և թրթռում.** շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումների մակարդակը նվազեցնելու համար նախատեսվելու է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործվելու են սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

**16.1.8 Արտակարգ իրավիճակներ.** շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.

- նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,
- աշխատակիցներին նախապատրաստելու են արտակարգ իրավիճակներում գործելու նպատակով,
- տարածքն ապահովելու է առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ կյուլերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- եղանակային ծանր պայմանների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,
- տեխնածին աղետների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատվելու են էլեկտրասնուցման սարքերը, ապահովվելու են վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

**16.1.9 Մարդու առողջություն և անվտանգություն.** արևային կայանի շինարարության և շահագործման փուլերում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները: Տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում

կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը:

**Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն.** Աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվելու է.

- գործունեության տարածքն ապահովված է լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.80 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովվելու են շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:

#### **16.1.10 Սոցիալական ոլորտ.**

- բացառվելու է գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,

- աշխատանքները կազմակերպվելու են ցերեկային ժամերին,

- կարգավորվելու է մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

Գործունեության իրականացման շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ 8 աշխատող:

**16.1.11 Բարեկարգում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- մոնտաժումից հետո մաքրվելու են մետաղական մակերևույթները,
- շինարարական հրապարակները մաքրվելու են, վերականգնվելու և լանդշաֆտը:

## **16.2 Շահագործման փուլ.**

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու կայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ: Շրջակա միջավայրի հնարավոր ազդեցությունների մեղման կամ կանխարգելման նպատակով նախատեսվում է .

- մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2 աշխատողի միջոցով,
- մշտական գործելու և պահակակետ, որտեղ տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

Կայանի լառուցման և շահագործման ընթացքում պահպանվելու են «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին կառավարության որոշման պահանջները, մանավորապես՝ սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված էլեկտրակայանքների անվտանգության ապահովման պայմանները, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար տեխնիկական պահանջները, ինչպես նաև դրանց կատարման համար գործատուների, աշխատողների, սպասարկող անձանց և քաղաքացիների փոխհարաբերությունները:

### **16.2.1 Ջրային ռեսուրսներ.**

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու են սանիտարական հանգույցից (բիոզուգարան),

### **16.2.2 Հողային ռեսուրսներ.**

- ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- հողի խոնավացում՝ ջրցանման միջոցով, որի համար ջուրը տարածք կտեղափոխվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

### **16.2.3 Կենսաբազմազանություն.**

- շահագործման փուլում հնարավորինս նվազեցվելու է տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

### **16.2.4 Թափոններ.** Շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց

ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է.

- ենթակայանի տարածքում, հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով.
- կառուցվելու է յուղընդունիչ հոր (բաք)՝ երկաթբետոնի, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,
- վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը հեռացվելու և հանձնվելու է համապատասխան վերամշակող կազմակերպություններին,
- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,
- վերամշակող կազմակերպություններին է հանձնվելու նաև կայանի շահագործման ընթացքում առաջացած յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը,
- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,
- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին:

**16.2.5 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն.** ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ՀՀ կառավարության N363-Ն 02.04.2009թ. որոշման պահանջներին համաձայն:

#### **Տեղադրվելու է.**

- ինվենտորների մեջ ներկառուցված հատուկ WiFi swich-եր,
- տեսահսկման համակարգ, 48 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ:

**16.2.6 Սոցիալական.** Գործունեության իրականացման /շահագործման փուլ/ արդյունքում բացվելու են նոր աշխատատեղեր՝ 6 աշխատող, որոնք աշխատելու են հերթափոխով:

**16.2.7 Արտակարգ իրավիճակներ.** արևակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով.

- ենթակայանի տարածքում հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով,
- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,
- պարբերաբար ստուգվելու են վթարներին հակազդելու սարքավորումների աշխատունակությունը:



### 16.2.8 Լանդշաֆտ. լանդշաֆտի պահպանման նպատակով.

- բացառվելու է նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և հնարավորինս բերվելու է նախկին տեսքին:

**Կարողությունների զարգացում.** Արևային կայանի աշխատանքների անվտանգությունը և հուսալիությունը ապահովվելու նպատակով, այն պետք է համալրված լինի բարձրորակ և փորձառու մասնագետներով: Նման մասնագետներ հնարավոր է վարձել երկար տարիների փորձ ունեցող նմանատիպ ընկերություններից, հնարավոր է նաև նշված ընկերություններում կազմակերպել մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Նշված մասնագետներով համալրումը կապահովի կայանի անվտանգ և անխափան աշխատանքը, հնարավորություն կտա մոնիթորինգի պատշաճ իրականացում:

Համապատասխան մասնագետները հետևելու են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններով նախատեսված միջոցառումների ժամանակին և պարտադիր իրականացմանը:

## 17. Փակման փուլ

Շահագործման ժամկետի ավարտից հետո ընկերությունը հետագա հնարավորությունների բացակայության պայմաններում կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում: Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի՝ որպես թափոնատեսակի, լուծումները:

Զանի որ արևային կայանի պանելները (батаре́йка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլ), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում է հրատապ լուծում պահանջող խնդիր: ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտություն կա մշակելու արևային կայանի գործարկման ժամկետը լրացած և գործածությունից դուրս եկած «արևային» թափոնների՝ պանելների, ֆոտոէլեմենտներ պարունակող արևային սնուցիչների վերամշակման ծրագիր, նաև համապատասխան օրենսդրության մշակում և ընդունում, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը:

Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

- հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,
- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրների, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,
- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային

սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,  
- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող ներդրման արժեքը կազմում է 3,5 մլն ամերիկյան դոլլար: Ներդրման արժեքի մեջ մտնում են կայանի կառուցման շինարարական և շահագործման, և փակման փուլերում կատարվող, ինչպես նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների իրականացման բոլոր ծախսերը:

## 18. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է: Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառում՝ հսկողություն,
- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- իրականացվելու է բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- իրականացվելու են շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,
- ապահովվելու է բարեկարգման աշխատանքների իրականացումը:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում: Ընդհանուր նախատեսված գումարը կազմելու է 1,5 մլն. դրամ:

**Բողոքների ընթացակարգը.** Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները,

պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

### **19. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան**

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է ՇՄԱԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի՝ շինարարության և շահագործման փուլերում, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսում է մանրամասնությունների ազդեցությունների մեղմման միջոցառումների, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ:

**Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան**

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման և իրականացման պատասխանատու	Վերահսկող	Միջոցառումների արժեքը /դրամ/
	<p><b>Շինարարության փուլ (4 ամիս)</b></p> <p><b>Օդային ավազան</b></p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան,</li> <li>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,</li> </ul>	<p><b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի»ՍՊԸ</b></p>	<p><b>«Դիզավայտ» ՍՊԸ</b></p>	<p><b>5000</b></p> <p>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- տարածքում նույնը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,</li> <li>- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</li> </ul>			
--	--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

<b>2</b>	<b>Հողային ռեսուրսներ</b>	<p>Գործունեության իրականացման վայրում հողի բերրի շերտը բացակայում է: Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .</p> <ul style="list-style-type: none"> <li>- հողային զանգվածը կուտակվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում,</li> <li>- այն օգտագործվելու է անմիջապես տեղում հետլցման և տարածքի բարեկարգման համար,</li> <li>- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,</li> <li>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի»ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</b>
----------	---------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------	-----------------------	-----------------------------------------------------

		տակդիրների, իսկ շինարարական տեխնիկական ժամանակավոր կայանվելու Է գրունտային ճանապարհի վրա, - շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու Է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:			
3	<b>Ջրային ռեսուրսներ</b>	Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ տարածքում բացակայում են գրունտային և մակերևութային ջրահոսքերը: Նախատեսվում է. - ճանապարհների ջրցանն իրականացվելու Է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու Է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի, - աշխատողները կօգտվեն բիոզուգարանից, որը մաքրվելու Է մասնագիտական կազմակերպությունների	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է կայանի կառուցման և շահագործման արժեքում</b>

		կողմից՝ պայմանագրային հիմունքներով:			
4	<b>Կենսաբազմազանություն</b>	<p>Գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու համապատասխան գերատեսչություններին,</li> <li>- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է կայանի կառուցման և շահագործման ծախսերում</b>

		<p>սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,</li> <li>- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի,</li> <li>- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:</li> </ul>			
5	<b>Թափոններ</b>	<p>Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- վտանգավոր նյութերը և մետաղական թափոնների կուտակում տարածքում չի նախատեսվում,</li> <li>- թափոնները կհանձնվեն համապատասխան</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</b>



		<p>լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,</p> <p>- շինարարական թափոնները(շինադք)՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, մինչև աղբավայր տեղափոխելը կկուտակվեն տարածքում հատուկ պարկերի կամ տարողությունների մեջ, կտեղադրվեն տակդիրների վրա՝ ծածկի տակ,</p> <p>-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր,</p> <p>-շինարարության ժամանակ առաջացած կենցաղային աղբն ամենօր կտեղափոխվի Կապալառուի կողմից:</p>			
6	<b>Պատմամշակութային հուշարձաններ</b>	Գոյություն ունեցող դամբարանաշերտի տարածքում՝ արևակայանի շինարարության և շահագործման փուլերում բացառվելու են.	<b>Կապալառու՝ «Փառեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	

		<ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքները,</li> <li>- հողային շերտի խախտումները,</li> <li>- կենցաղային և շինարարական աղբի կուտակումները</li> <li>- Ձեռնարկողը, մինչև շինարարական աշխատանքների սկսելը, լիազորված մարմնի հետ կնքելու է պարտավորագիր՝ հնագիտական օբյեկտների պահպանության նպատակով:</li> </ul>			
7	<b>Աղմուկ և թրթռում</b>	<p>Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումների մակարդակը վերահսկելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,</li> <li>- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործվելու են սարքին վիճակում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,</li> <li>- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</b>

8	<p><b>Արտակարգ իրավիճակներ</b></p>	<p>Շինարարության ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,</li> <li>- աշխատակիցներին նախապատրաստելու են արտակարգ իրավիճակներում գործելու նպատակով,</li> <li>- տարածքն ապահովելու է առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,</li> <li>- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,</li> <li>- եղանակային ծանր պայմանների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,</li> <li>- տեխնաձին աղետների(քամու</li> </ul>	<p><b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b></p>	<p><b>«Դիզափայտ» ՍՊԸ</b></p> <p><b>Համապատասխան տեսչական մարմին</b></p>	<p><b>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</b></p>
---	------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------	-------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------

		<p>ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատվելու են էլեկտրասնուցման սարքերը, ապահովելու են վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը:</p>			
9	<p><b>Մարդու առողջություն և անվտանգություն</b></p> <p><b>Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</b></p>	<p>Արևային կայանի շինարարության և շահագործման փուլերում պահպանվելու են մարդկանց կյանքի, անվտանգության և առողջության պահպանմանն պայմանները:</p> <p>Աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>-1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,</li> <li>-աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,</li> <li>-աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր</li> </ul>	<p><b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b></p>	<p><b>«Դիզափայտ» ՍՊԸ</b></p> <p><b>Համապատասխան տեսչական մարմին</b></p>	<p><b>Ներառված է շինարարական աշխատանքների և արևակայանի շահագործման արժեքում</b></p>

		<p>ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),</p> <p>- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..80 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <p>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,</p> <p>- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,</p> <p>-ապահովվելու են</p>			
--	--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

		<p>շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոններին համապատասխանությունը,</p> <p>- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,</p> <p>- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <p>- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:</p> <p>Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:</p>			
--	--	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

10	<b>Սոցիալական</b>	<ul style="list-style-type: none"> <li>- բացառվելու է գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,</li> <li>- աշխատանքները կազմակերպվելու են ցերեկային ժամերին,</li> <li>- կարգավորվելու է մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:</li> <li>- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է արևակայանի կառուցման ծախսերում</b>
11	<b>Բարեկարգում</b>	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> <li>-շինարարական սարքավորումները ապամոնտաժվելու են,</li> <li>-մոնտաժումից հետո մաքրվելու են մետաղական մակերևույթներ,</li> <li>շինարարական հրապարակները մաքրվելու են, վերականգնվելու է լանդշաֆտը:</li> </ul>	<b>Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ</b>	<b>«Դիզափայտ» ՍՊԸ</b>	<b>Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում</b>





	<p><b>Կենսաբազմազանություն</b></p> <p><b>Թափոններ</b></p>	<p>Կտեղափոխվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>-Շահագործման փուլում հնարավորինս նվազեցվելու է տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:</p> <p>Շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- կառուցվելու է յուղընդունիչ հոր (բաք)՝ երկաթբետոնի, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,</li> <li>- վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղն ըստ անհրաժեշտության հեռացվելու և հանձնվելու է համապատասխան վերամշակող կազմակերպություններին,</li> </ul>			
--	-----------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

		<p>- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,</p> <p>- հալոգեններ, դեֆիլիներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով</p> <p>- վերամշակող կազմակերպություններին է հանձնվելու նաև կայանի շահագործման ընթացքում առաջացած յուղոտված լաթերը և այլ յուղային նյութեր պարունակող այլ մասերը,</p> <p>- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,</p> <p>- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է</p>			
--	--	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--



	<p><b>Լանդշաֆտ.</b></p> <p><b>Սոցիալական</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ենթակայանի տարածքում հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներ,</li> <li>- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:</li> <li>- պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու սարքավորումների աշխատունակությունը:</li> </ul> <p>Լանդշաֆտի պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>-բացառվելու է նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները,</li> <li>- լանդշաֆտային այլ փոփոխությունները,</li> <li>- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և բերվելու է հնարավորինս նախկին տեսքի:</li> </ul> <p>Շահագործման փուլում ընդգրկվելու են 6 աշխատող,</p>			
--	--------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

		որոնք աշխատելու են հերթափոխով:			
--	--	-----------------------------------	--	--	--

**20. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)**

<b>Շինարարության փուլ (4 ամիս)</b>	<b>Պարբերականությունը (ժամանակամիջոցը)</b>	<b>Մոնիթորինգի եղանակը</b>	<b>Պատասխանատու</b>	<b>Գումարը</b>
Շինարարական կյուրթերի տեղափոխման	Կախված շինարարական կյուրթերի տեղափոխման պահանջի անհրաժեշտությունից	Ուղեգծի և տարածքի ուսումնասիրություններ	Կապալառու կազմակերպություն	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Շինարարական կյուրթերի անվտանգության հսկողություն	Շինարարական կյուրթերի ներկրման ընթացքում	Փաստաթղթային ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Շինարարական կյուրթերի և թափոնների տեղափոխում	Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում

Հողի աղտոտումը կանխելու նպատակով	Շաբաթը մեկ անգամ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Օդի աղտոտումը կանխելու նպատակով, փոշի, ծուխ	Ամեն օր	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Աղմուկի մակարդակի տատանումներ	Շաբաթը մեկ անգամ	Աղմկաչափ	Կապալառու	30-հազար դրամ
Շինարարական և կենցաղային աղբի հեռացում տարածքից	Շինարարության ընթացքում	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Աշխատողների անվտանգության և առողջության ստուգում	Շինարարության ընթացքում	Շինարարության տարածքում, հարցումների իրականացում,	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Հանրության անվտանգություն	Շինարարության ընթացքում	Համապատասխան ցուցատախտակների տեղադրում	Կապալառու «Դիզափայտ» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Պատմամշակութային հուշարձաններ	Շինարարության ընթացքում	- Ձեռնարկողը, մինչև շինարարական աշխատանքների սկսելը, լիազորված մարմնի հետ կնքելու է պարտավորագիր՝ հնագիտական օբյեկտների պահպանության նպատակով:	Կապալառու, «Դիզափայտ» ՍՊԸ	

		Պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, ընկերությունը դադարեցնելու է շինարարական աշխատանքերը, վերջինիս մասին հայտնելով լիազոր մարմնին (2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման համաձայն):		
<b>Շահագործման փուլ</b>				
Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու, «Դիզափայտ» ՍՊԸ	Ներառված է կատարվող աշխատանքների արժեքում
Կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի Փոփոխությունների վերաբերյալ հսկողություն	Տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն	«Դիզափայտ» ՍՊԸ Համապատասխան մասնագետներ	100 հազար դրամ
Արտակարգ իրավիճակներ	Արտակարգ իրավիճակների դեպքում	Աշխատանքի դադարեցում	«Դիզափայտ» ՍՊԸ	Ներառված է արևակայանի շահագործման ծախսերում

<p>Վթարային իրավիճակների նվազեցում</p>	<p>Օրական ստուգումներ</p>	<p>Խուսափել կայանի խափանումից, սարքին պահել բոլոր սարքավորումները Սեյսմիկ վտանգի առկայության դեպքում կայանի աշխատանքի շտապ դադարեցում:</p>	<p>«Դիզափայտ» ՍՊԸ</p>	<p>Ներառված է շահագործման արժեքում</p>
<p>Սոցիալական</p>	<p>Գործունեության ընթացքում</p>	<p>Աշխատանք տրամադրելու առաջնահերթություն տրվելու է համայնքի բնակչությանը:</p>	<p>Կապալառու, «Դիզափայտ» ՍՊԸ</p>	<p>Ներառված է արևակայանի շահագործման ծախսերում</p>



## **21. Հետնախագծային վերլուծություն**

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսելու է լրացուցիչ միջոցառումներ՝ աշխատանքների կարգաբերման և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Դրանք ևս ներառվում են հետնախագծային վերլուծության պլանում:

## **22. Հանրային ծանուցում և քննարկումներ**

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Բ կատեգորիայի նախատեսվող գործունեությունների համար նախատեսվում է չորս փուլով հանրային ծանուցման և քննարկումների իրականացում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկումներն իրականացվել են երեք փուլով՝ նախնական գնահատման և փորձաքննության(1-2), ինչպես նաև հիմնական գնահատման (3) գործընթացներում: Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը կողմ են արտահայտվել արևային էլեկտրակայանի կառուցմանը:

Հանրային քննարկումների երրորդ փուլում հանրությանը ներկայացվել է նախագծային փաստաթուղթը և ՇՄԱԳ հաշվետվությունը: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրության կողմից հավանության է արժանացել: Հանրային լսումների արձանագրությունը՝ (Հավելված 6):

## **23. Եզրահանգում.**

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներում Արևային Էներգիան օգտագործվելու է տնտեսության տարբեր բնագավառներում՝ ջեռուցման, լուսավորության, տաք ջրի, ավտոտրանսպորտի, վառելիքի արտադրության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: 2011 թվականին Էներգետիկայի միջազգային գործակալության զեկույցում նշվել է, որ արևային Էներգիայի տեխնոլոգիաները, ինչպիսիք են ֆոտոգալվանները, արևային տաք ջուրը և կենտրոնացված արևային Էներգիան, կարող են ապահովել աշխարհի Էներգիայի մեկ երրորդը մինչև 2060 թվականը, սահմանափակել կլիմայի փոփոխությունը և անցնել վերականգնվող Էներգիայի: Արեգակից ստացված Էներգիան կարող է առանցքային

դեր ունենալ համաշխարհային տնտեսությունը ապաածխաթթվայնացնելու գործընթացում և Էներգախնայողության բարելավման ոլորտում:

Արեգակնային Էներգիայի մեծ ծավալն այն դարձնում է ԷլեկտրաԷներգիայի խիստ գրավիչ աղբյուր: Համաձայն 2011 թվականին Էներգիայի միջազգային գործակալության՝ «մատչելի, անսպառ և մաքուր արևային Էներգիայի տեխնոլոգիաների զարգացումը հսկայական երկարաժամկետ օգուտներ կունենա համաշխարհային տնտեսության զարգացման համար: Այն կնպաստի Հայաստանի, Էներգետիկ անվտանգության ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ ռեսուրսին, կբարձրացնի Էներգետիկ համակարգի կայունությունը, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը:

ՀՀ կառավարությունը խթանում է արևային և այլ այլընտրանքային կայանների կառուցման և հետագա զարգացման ներդրումային ծրագրերը՝ հատկապես չգազիֆիկացված համայանքներում: Արևային ԷլեկտրաԷներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Հաշվետվությունում ներառված՝ ԲՍԿՊ-ում և մոնիթորինգի պլանում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումների իրականացվելու դեպքում «Դիզափայտ»ՍՊԸ-ի արևային Էլեկտրակայանը և 110ԿՎ օդային գիծը կարող է կառուցվել և շահագործվել առանց Էկոլոգիական և սոցիալական միջավայրի վրա զգալի բացասական ազդեցության:

## Գրականություն

1. ՀՀ կառավարության 30 նոյեմբերի 2006 թվականի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՃՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ԶԱՂԱԶԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1728-Ն որոշում:
2. «ԱՂՍՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA): Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.:
4. RENEWABLES 2007 GLOBAL STATUS REPORT, Renewable Energy Policy Network for the 21st Century:
5. Մ.Վ. Գոլիցին, Ա.Մ. Գոլիցին, Ն.Վ. Պրոնինա: «Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ» Էդ. Գիտություն, Մոսկվա, 2004:
6. Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն արդյունաբերական մասշտաբի արեվային ֆոտովոլտային էլեկտրակայաններ:
7. ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի՝ Արագածոտնի մարզի 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ռ Ա 2 Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 29 արձանագրային որոշում:
8. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:
9. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք էջ:
10. ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ի՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»:
11. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
12. [hy.wikipedia.org](http://hy.wikipedia.org) –ինտերնետային կայք
13. Արևային էլեկտրակայանների կառուցման վերաբերյալ միջազգային զեկույցներ

/հաշվետվություններ/:

14. СП.485.13130.2021:

15. СНИП IV – 2 – 82 “Сборник. Земляные работы”

16. СП 31.13330.2012 ՄՆԻՊ 2.04.02-84\* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:

17. ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրաման:

18. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրաման (ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում եվ ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին):

19. ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն «ԷԼԵԿՏՐՈՎԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՐՎԱԳՈՐԾՄԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ որոշում:

# Քաղեղված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 մարտի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԴԻՉԱՓԱՅՏ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արագածոտն, համայնք Թային ք. Գայի փողոց 85 հողամաս

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Տարածամկետ վճարումով անշարժ գույքի առուվաճառքի 04/03/2021թ. գ/մ 1681 պայմանագիր, Լրացուցիչ համաձայնագիր /04/03/2021թ.-ին կնքված տարածամկետ վճարումով անշարժ գույքի առուվաճառքի ներքո/ 23/03/2021թ. գ/մ 2390

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 02-003-0224-0628

Մակերեսի չափը (հա)՝ 15.2555

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29032021-02-0008, գաղտնաբառ՝ FYDPCS6EABEC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱԲԵԼ ԲԱԿԼԱԶՅԱՆ

Ջբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 29032021-02-0008, գաղտնաբառ՝ FYDPCS6EABEC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2



Հավելված 2. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա



### Հավելված 3. Ճարտարապետահատակագծային առաջադրանք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ԱՐԿԻՏԵԿՏՈՆ ԵՄԻՉ ԹԱԼԻՆ ՀԱՄԱԸՆԹ**  
(մարզը, համայնքը)

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ**  
**(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳՐԱՍԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՈՍԳԱՂԱՆԵՔ)**

N 08 13 04 2021 թ.

Օբյեկտ 5 ԱԳՎՏ դրվածքային հզորությամբ Արևային ֆոտովոլտային կայանի  
կառուցման աշխատանքների  
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)  
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

\_\_\_\_\_ Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(3-րդ կատեգորիա)

դիսկալնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

